

Մ. ԱՐԵՂԵԱՆ

ՏԱՐՐԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ

ԳԻՆՆ Ի 25 ԿՈՊ.

Ս Տ Ո Ր Ի Ն Դ Ա Ս Է Ն Թ Ա Ց

Թ Ի Յ Լ Ի Ո

ԵՆԵԿՏՐԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ ՈՒ ՆԱԿԱԿԱՆ ՊԵՐՏՈՒՆՆԵՐՈՎ

1 9 9 7

(52)

491-99-5
Ա-13

804

МАШИНА И МАТРИЦА

„АРАГАЦЪ“

0.405-1071

Судебни Трибунал:

268 км
1963р.

5922

91-22-5

Ա-13

Մ. ԱՐԵՂԵԱՆ

ՏԱՐՐԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ

Ս ՏԻՈՐԻՆ Դ Ա Ս Ը Ն Թ Ա Յ



Թ Է Ֆ Լ Ի Ս

ԵՐԵՎԱՆԻ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԿՂԱՆԵԱՆՑ ՊՈԼԻԹԵԽՆԻԿԱՆ 7.
1 9 0 7 (52)

01. 2013

01. 2013

Յ Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն

Մի տարի առաջ հրատարակեցինք «Աշխարհաբարի քերականութիւն» դասագիրքը միջնակարգ դպրոցների համար, որ չընայելով իր մէջ ունեցած նորութիւններին՝ լաւ ընդունելութիւն գրտաւ մեր ուսուցիչների կողմից, — վեց ամսուայ մէջ 1200 օրինակից աւելի սպառուեց: Մենք այդ քերականութիւնը կազմելիս ինկատի էինք ունեցել Ս. Էջմիածնի ճեմարանի դասընթացը՝ մի փոքր աւելի չափով: Սակայն դժբախտաբար մեր դպրոցները լեզուի համար նոյն յառաջադիմութիւնը չունին. ուստի մի քանի վարժապետների առաջարկութիւններին բաւականութիւն տալու համար հրատարակում ենք այս Տարրական Քերականութիւնն աւելի համառօտ ծաւալով և մէջը մտցնելով ուղղագրական վարժութիւններ և վերլուծութեան տեսակներ: Մեր «Աշխարհաբարի քերականութիւնը» կը մնայ իրրեւ միջին դասընթաց և լրացում քերականական ծանօթութիւնների, որից ծխական դպրոցների ուսուցիչները հարկաւոր դէպքում կարող են օգտուել Զ. տարում, երբ պէտք է սովորած քերականութիւնը լրացնել և սխտեմատիկ կերպով ամփոփել:

Այս դասագրքի նիւթը համապատասխան է դպրոցական նախագծի մէջ դրած քերականութեան ծրագրին, միայն դուրս են ձգուած ընդարձակ և միաւորեալ նախադասութիւնները, որ նոր քերականութիւնների մէջ ընդհանրապէս չեն ընդունում. ապա և երկրորդական նախադասութիւնների տեսակները, ինչպէս և նախադասութեան մէջ խնդիրների երկրորդական տեսակները (տեղի, ժամանակի և այլ պարագաներ. յատկացուցիչ, բացայայտիչ և ին), որոնք մեր կարծիքով աւելորդ ծանրաբեռնութիւն են: Բաւական է, եթէ ծխական դպրոցի աշակերտը երկրորդական խօսքը գրել խաւորից տարրերի և շատ շատ՝ իմանայ ենթակայ և խնդիր խօսքերը. իսկ նախադասութեան կազմութիւնից՝ բայ,



6279- 76

ենթակայ, ստորոգեալ, բայի խնդիրներ և կողմնակի խնդիրներ: Ծրագրից դուրս նոր մտցրած ենք համադասական նախադասութիւնների մասին ծանօթութիւն, որ աւելի կարևոր է:

Աւելորդ էի լինիլ գուցէ յիշել, որ՝ ինչպէս «Աշխարհաբարի քերականութեան», նոյնպէս և սրա մէջ աշխատել ենք հեռու մնալ քերականական ձևերի ծագման բացատրութիւններից: Այդ ամենը իբրև պատմական-քերականական խնդիրներ կարող են մտնել միայն վերին դասընթացի կամ զրաբարի քերականութեան մէջ: Այստեղ, ինչպէս և «Աշխարհաբարի քերականութեան» մէջ, մենք յաճախ զերադասել ենք մեքենայական կանոնը, առանց որին զբուար է փոքրների համար քերականութիւն կազմել:

Թիֆլիս, 1907 մայիս 28.

ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՒԱԾ

ՀՆԶԻՒՆ, ՏԱՌ ԵՒ ՎԱՆԿ

ԼԵԶՈՒԻ ԲԱՂԱԴՐԻԶ ՄԱՍԵՐԸ

Պօսելիս մեր մտքերն ենք յայտնում ուրիշներին բառերով: Պօսքը կամ նախադասութիւնը մտածութեան արտայայտութիւնն է բառերով:

Պօսքը կազմւում է մի կամ մի քանի բառից: Օրինակ՝ զնացի մի բառ և մի խօսք է. իսկ ես այսօր զնացի գրօնելու չորս բառ և մի խօսք է:

Բառը կազմւում է մի կամ մի քանի վանկից: Օրինակ՝ պատ բառը միավանկ է, իսկ քաղաք բառը երկու վանկանի: Ամեն վանկ արտասանւում է մի անգամից, մի շնչով: Միավանկ բառերն ուրեմն արտասանւում են մի անգամից, իսկ բազմավանկ բառերն արտասանւում են վանկ վանկ, այսինքն քանի վանկ կայ բառի մէջ, բառն այնքան մասի է բաժանւում: Օրինակ՝ դասարան երեք վանկանի բառն արտասանւում է՝ դա-սա-րան:

Վանկը կազմւում է մի կամ մի քանի հնչիւնից: Օրինակ՝ ա-րա-րած բառի առաջին վանկը՝ ա մի հնչիւն է, երկրորդ վանկը՝ րա երկու հնչիւն է, իսկ երրորդ վանկը՝ րած երեք հնչիւն է:

Հնչիւնն երբ լեզուի ամենապարզ բաղադրիչ մասերն են, որոնք նոր մասերի չեն վերածւում:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹԻՒՆ:—Որոշել թէ ներքեւում դրած խօսքերից ամեն մէկը քանի բառից է կազմուած. ամեն բառ՝ քանի վանկից և ամեն վանկ՝ քանի հնչիւնից:

Մեզնից շատ առաջ կար մի թագաւոր: Մեծ ծով էր պատել նրա աշխարհը: Ունէր նա երկու մատաղհաս աղջիկ:

ՏԱՌԵՐ ԵՒ ՈՒՐԻՇ ՆՇԱՆՆԵՐ

Ամեն բան, որ ասուում, խօսուում ենք, կարելի է նշաններով գրել և կարգալ: Հնչիւնների նշանագրերն ասուում են զիրկամ տառ: Հնչիւններն արտասանուում են և լսուում, իսկ տառերը գրուում կամ տպուում են և կարդացուում:

Ամեն տառ ունի երկու ձև՝ մեծատառ (գլխատառ, գլխագիր) և փոքրատառ:

Տառերի սովորական շարքը կոչուում է այբուբեն: Հայոց լեզուի այբուբենն ունի 38 տառ, որ են՝

Ա ա Բ բ Գ գ Դ դ Ե ե Ղ ղ Զ զ Է է Ը ը Թ թ Ժ ժ
Ի ի Լ լ Խ խ Ծ ծ Կ կ Հ հ Ձ ձ Դ դ Ճ ճ Մ մ Յ յ Ն ն
Շ շ Ո ո Չ չ Պ պ Ջ Ջ Ռ ռ Ս ս Վ վ Տ տ Բ բ Յ յ
Ի ի Փ փ Ք ք Օ օ Ֆ ֆ:

Այս տառերից զատ կայ նաև և նշանագիրը, որ կազմուած է նւ տառերի միութիւնից:

Բացի տառերի, կան և հետեւեալ նշանները, որոնք առանձին գործածութիւն ունին.

1. Վերջակէտ (:), միջակէտ (.), ստորակէտ (,), բուրթ ('):

2. Շեշտ ('), հարցական նշան (?), բացազանչական նշան կամ երկար ('):

3. Զակերտ («»), փակագիծ (), գիծ (—), ենթադրական (-):

ՈՒՂԱԳՐՈՒԹԻՒՆ:—Վերնագիրները սովորաբար տպուում են մեծատառով: Գլխատառով սկսուում են՝ գրուածքի, տողագլուխների ու ոտանաւորի տողերի սկզբի բառերը, ինչպէս և վերջակէտից յետոյ եկող առաջին բառերը:

ՁԱՅՆԱԻՈՐ ԵՒ ԲԱՂԱՁԱՅՆ ՏԱՌԵՐ

Ձայնատը կոչուում են այն հնչիւնները, որոնք մենակ կարող են վանկ կազմել, իսկ քաղածայն ասուում են այն հնչիւնները, որոնք մենակ չեն կարող վանկ կազմել: Վանկի էական մասը ձայնաւորն է. առանց ձայնաւորի վանկ չկայ: Բաղաձայնները մենակ կամ ուրիշ բաղաձայնների հետ կցուում են որեւէ ձայնաւորի առաջից կամ ետեւից և միասին կազմում են մի վանկ: Օրինակ՝ ա-զատ բառի առաջին վանկը մի հնչիւն է՝ ա ձայնաւոր. իսկ երկրորդ վանկը երեք հնչիւն է՝ միջին ա ձայնաւոր, որին առաջից միացած է զ բաղաձայնը, իսկ ետեւից ա բաղաձայնը:

Ձայնաւոր և բաղաձայն հնչիւնների նշաններն ասուում են ձայնաւոր և բաղաձայն տառեր:

Ձայնաւոր հնչիւններն են՝ ա, է, ը, ի, օ, ու:

Ու հնչիւնի համար առանձին տառ չկայ այբուբենում, այլ գրուում է ու երկտառով: Իսկ է և օ հնչիւնների համար կան նաև ե և ո տառերը:

Բաղաձայն տառերն են՝ բ, գ, դ, զ, թ, ժ, լ, խ, ծ, կ, հ, ձ, դ, ճ, մ, յ, ն, շ, չ, պ, ջ, ու, ս, վ, տ, բ, ց, լ, փ, ք, ֆ:

Ն (ւ) տառը բաղաձայն է վ հնչիւնով, բայց ի տառից յետոյ երբեմն ու ձայնաւորի հնչիւն ունի, ինչպէս՝ հարիւր, միւս բառերի մէջ:

առը բառերի սկզբում ունի հ տառի հնչիւն, օրինակ՝

նակ՝ յանցանք (=հանցանք)։ Բառերի միջուկ, երբեմն և վերջում, յ տառը կէս ի ձայնաւորի նշան է և կոչւում է կիսաձայն, օրինակ՝ սլայծառ, հայ։ Իսկ բառերի վերջում գրւում է ա և ո ձայնաւորներից յետոյ և սովորաբար անձայն է քնում, ինչպէս՝ ծառայ, կը գայ, յետոյ։

ՈՒՂԱԳՐՈՒԹԻՒՆ.— 1. Ը ձայնաւորը բառերի սկզբում և վերջում գրւում է (ընծայ, ընկնել, տունը), իսկ միջում սովորաբար չի գրւում։ օրինակ՝ արտասանում ենք մըտնել լըցնել, բայց գրում ենք սովորաբար մտնել, լցնել։ Երբեմն բառերի սկզբում ևս սկ, սս, ստ, սի, սթ, շկ, շս, զք, զգ բաղաձայններից առաջ լսւում է ը ձայնաւորը, բայց սովորաբար չի գրւում։ Օրինակ՝ արտասանում ենք այն մարդն ըսպասում է քեզ, բայց գրում ենք՝ այն մարդն սպասում է քեզ։

2. Տողադարձ։ Երբ բառն ամբողջ չի տեղաւորւում տողի վերջում, մի մասը տակի տողն ենք տանում, կամ տողադարձ ենք անում։ Այդ ժամանակ տողի վերջում գրւում է ենթամիայ (-) նշանը։

Տողադարձ անելու համար պէտք է բառերը կանոնաւոր կերպով վանկ վանկ արտասանել և ամբողջ վանկը կամ վերի տողում գրել կամ տակի տողը անցկացնել։ Միավանկ բառերը կարելի չէ բաժանել։

Տողադարձի ժամանակ ը ձայնաւորը միշտ գրւում է իրարուց բաժանուած վանկերի մէջ, ինչպէս՝ զըտ-նել, քաղ-ցըր։

ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ։— 1. Օրինակ՝ Թագաւոր, Թա-գա-ւոր։

Թագաւոր, տարի, ծաղիկ, բաժակ, գիշեր, ամիս, ազատել, ուրախ, իրիկուն, աղաչանք։

2. Օրինակ՝ պարտիզպան, պար-տիզ-պան։

Պարտիզպան, սաստիկ, կարկուտ, կարմիր, թոռնիկ, երկու, վախկոտ, աղբիւր, եղբայր, տախտակ, ազգական։

3. Օրինակ՝ մտնել, մըտ-նել։

Մտնել, գտնել, կտաւ, գրկաբաց, շրջապատել, բռնել, պնդել, Թնդանթ, երկքից, տղմոտ, խփեց, —սպասել, զգալ, զբօսնել, — մանր, ծանր, քաղցր, բարձր, աստղ, արկղ։

4. Օրինակ՝ զարթնել, զարթ-նել։

Զարթնել վարձկան, որսկան, տրտմել, ընկնել, խրտնել, Պարսկաստան, Հնդկաստան։

5. Օրինակ՝ երեւել (=երեւել), ե-րե-ւել։

Երեւել, տերեւից, վերևում, Թեթևութիւն, պարզել, թեւաւոր, արեւածաղիկ, ձևական։

3. Օ և Ո ձայնաւորներ։— Ո տառի բուն հնչիւնն է օ. բայց բառերի սկզբում սովորաբար արտասանւում է իբրև վո (վօ), և այդ դէպքում ամեն անգամ երբ վո (վօ) է լսւում, գրւում է միայն ո տառով, ինչպէս՝ ողորմել, ոլորել, ոգի, ոտ, որդի բառերի մէջ։ Բացառութիւն կազմում են՝ ուլ, ուլկիանոս, ուլսաննա, ուլազիս բառերը, որոնց սկզբի ո-ն արտասանւում է իբրև օ։

Օ տառով գրուող բառերը համեմատաբար սակաւաթիւ են։

ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ։— 1. Որդեակ, լսիւր հօրդ խրատը։ Պատուիր քո հօրն ու մօրը։ Մօր, մօրական, մօրաքոյր մօրեղբայր։ Հօր, հօրական, հօրեղբայր, հօրաքոյր։— Հոր, ջրհոր։— Այսօրուայ փուշը, էգուցուայ նուշը։ Անդ հեռու ալևոր հայր ունիմ սգաւոր, որ միակ իր որդուն սպասում է օրեցօր։ Բարօրութիւն, կէսօր, միջօրէ։— Արի ապրենք եղբօր պէս։ Եղբօրորդի, հօրեղբօր։— Խօսքը մերը, տունը մերը։ Խօսել, խօսակցութիւն, անխօս, ստախօս, զուարճախօս։— Գիշերը թաց աչքիս քունը մօտ չի գալիս։ Մօտիկ, մօտենալ։— Ծոյլ երեսման դեռ չի վեր կացել, աղօթքն արել։ Աղօթել, աղօթարար։— Ծոյլ տղայի կօշիկները շունն է տարել մրմռալով։ Կօշկակար։— Ուսումնարանը սիրուն է իր խելօք, ժիր մանուկներով։ Խելօքանալ, խելօքութիւն։— Ուրիշ շատ տղայք կան աղքատ ու անօղնական։ Նոքա հայր ու մայր չունին. սև չոր հացի կարօտ են։ Օգնական, օգնել, օգնութիւն, — կարօտ, անկարօտ։—

2. Անտառի խորքում մի ճօճ կար կապած։ Ճօճել, ճօճանակ։— Երկուշաբթի հաց կը թխեմ, երեքշաբթի լօշ կը թրջեմ։

Ով որ մեզանից եօթը գիւղի անուն տայ վրայ վրայ, շուտ շուտ, գդալով նա ուտի: Եօթներորդ, եօթանասուն, եօթանասներորդ, եօթանասուն և եօթը: — Պողոսը մեծ զօրքով գնաց, իր հօրն ազատեց գերութիւնից: Զօրքը, զօրութիւն, զօրեղ, զօրաւոր, զօրանալ, զօրահանդէս, զօրապետ, անզօր, մեծազօր, լիազօր, հզօր, — զօռ (զօր) անել, զօռով, (զօրով): — Ծանօթ անծանօթ նրան յարգում են: Ծանօթանալ, ծանօթութիւն: — Կենդանիներից հրն է ամենից օգտակարը: Օգուտ, անօգուտ, ազգօգուտ, օգտել: Դէհ, քաշեցէք, սիրո՛ւն եզներ, առաջ տարէք արօրը: — Ցուրտն ու տաքը, կոշտն ու կակուղը բոլոր մարմնովս եմ շօշափում: Շօշափելիք:

3. Պառան իր բերնի պատառը նրա հետ կիսեց, սիրով յօժար նրա հետ կիսեց: Յօժարել, յօժարութիւն, սիրայօժար: Օխ, ճիւ, արդեօք կարժանանամ այն օրին: — Այս ճրագը շատ աղօտ լոյս է տալիս: — Ե՛կ, արեղաձագ, թող արտ ու արօտ, օրօրէ տղիս, քնի է կարօտ: Արօտատեղ: Օրօր ասել, օրօրոց, օրօրան: Դաշտը ծածկուեց ոչխարների հօտերով: Ոչխարի հօտ, վարդի հօտ: — Զաղացը եթէ յանկարծ կտրէ ձայնը, լռէ, սառչի, — ինչպէս մի թունդ թնդանօթից՝ ջաղացպանը վեր կը թռչի: Անօթ, թնդանօթ: — Առաջին դու խօսք ականջիս հասած, ու սիրոյ քաղցրիկ առաջին յօդուած: Այդ յօդուածը դեռ չենք կարդացել: Յօդ: Այսօր տօն է ծննդեան, աւետիս: Տօնել, տօնախմբութիւն: — Դրօշակները ծածանւում են:

4. Այսօր շատ տօթ է: Քաշիր, եղը, ուսիդ մատաղ, ձիպտին արն, քշիր, հօտաղ: Արտը բարձրացաւ, ցօղուն արձակեց ու հասկեր բռնեց: Արտերը ծածկուեցան ոսկեզօծ հասկերով: Օծել, ոսկեզօծել: Այ մարդ, վեր կաց, սառը ջրով լուացուիր, զօտիդ կապէ, գերանդիդ առ, դաշտ հասիր: — Նարօտ բերէք կանաչ-կարմիր, կապենք վզերն երկուսին: — Նապաստակը ցատկուելով մտաւ ցօղաթաթախ կանաչուտը: Յօղ, ցօղել: — Գիւղումը կար մի ծղնօտածածկ տանիքով տուն: Ծղօտ: — Սկսեց առատօրէն անձրև տեղալ: Օրէն, օրէնք, անօրէն, մարդկօրէն: — Տեսնում է յանկարծ իր առաջ կանգնած մի տարօրինակ մարդ: Օրինակ, անօրինակ: —

5. Նա հիմա ազատ թագուհի դառած՝ առօք ու փառօք ճաշի է նստած: — Ծուռ ակօսը մեծ եզնից է լինում: — Զարածճիւլայծերը տմբտմբացրին ձիգ մօրուքները: — Եկ, գնանք զբօսն:

լու. զբօսանք: Մի թագաւոր կար, անունն էր Պոօշ: — Պոօշ (շըրթունք): — Անօթի (քաղցած) փորով ման է գալիս: — Պաշտօնեան ճանապարհ ընկաւ իր մեծի հրամանը կատարելու: Պաշտօն, անպաշտօն, պաշտօնապէս: — Քրիստոս քօղն երեսին, հրեշտակները չորս գին, երկնքէն իջաւ, խաչապաշտից տները մտաւ: Քօղարկել: — Զատիկն արեւուտով, Զ. քօրհնէքը ճրագլուտով: Օրհնել, տնօրհնէք, մեռնօրհնէք: —

6. Բողկի նօսրն է լաւ: — Առաւօտեան դուարթ բացուած ծաղիկները կէսօրին թօշնեցին, թառամեցին: — Այսօր կրօնի դաս չունինք: — Յօնքը (ունքը) շինելու տեղ աչքը հանեց: Այդ գիրքն հիվ է յօրինել: — Հասարակութեան մէջ յօրանջեն ամօթ է: — Թօթափեցէք ձեր ոտքերի փոշին: Իրօք այդպէս է: Համառօտ խօսել, կարճառօտ գրել: Զանգակները դօղանջում են: Նրանց վառօղը հատաւ: Նրանք վաղօրօք (նախօրօք) պատրաստութիւն էին տեսել:

ԵՐԿԻՍՐԱՌՆԵՐ

Երբ երկու ձայնաւոր միանում և իբրև մի վանկ են արտասանւում, կազմում են երկբարբառ: Երկբարբառներն են՝ այ, (այս, պայծառ, հայ) ոյ, (լոյս, գոյն) լւա (սենեակ, կեանք), եօ (եօթը, արդեօք), իւ (իւր, հիւսիս):

ՈՒՂԱԳՐՈՒԹԻՒՆ: — Բառակցքում երկու ձայնաւորի մէջ ա և ո ձայնաւորներին յետոյ գրւում է յ կիսածայրը, որ արտասանութեամբ միանում է յաջորդ ձայնաւորին և նրա հետ միասին մի երկբարբառ է կազմում: Օրինակ՝ հրամայական, ծառայութիւն, շոյել: Տոգադարձի ժամանակ այս յ տառը յաջորդ ձայնաւորից անբաժան է մնում, ինչպէս՝ ծառա-յական, գո-յանալ, նա-յել:

ՎԱՐՃՈՒԹԻՒՆՆԵՐ: — 1. Օրինակ՝ հրամայել, հրա-մա-յել: Հրա-մայող, հրամայական. վայել. փայփայել. խնայել. կայարան, կայուն. երկնային. ծովային. գնայի, կարգայի. խաղայինք, զարմանայինք, շողայիք. ծառայութիւն. ծառայելով. քահանայութիւն:

2. Օրինակ՝ շոյել, շոյել: Գոյական, գոյութիւն, ներքոյական, յարգոյապատիւ, հայհոյանք. հոյակապ:

Եւ է ձայնաւորներ: Ետառի բուն հնչիւնն է է. բայց բառերի սկզբում սովորաբար արտասանուած է իբրեւ յն (յէ) երկբարբառ, ինչպէս՝ եզ, եկ, եղբայր բառերի մէջ:

Բառերի վերջում միշտ գրւում է միայն է տառը, օրինակ՝ մարգարէ, բազէ, ըոպէ, եթէ, գրէ, ուտէ, խմէ: Մնացած գէպքերում է-ով գրուող բառերը համեմատաբար սակաւաթիւ են:

ՎԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ: 1. Ի սէր Աստուծոյ, խնայեցէք: Սէր, ընկերասէր, մարդասէր, ջանասէր: Սեր (կաթի): Կատուն եկաւ փխտիկ, փխտիկ, հազար նազով ինչպէս հարսիկ: Զիզի քարը տես, տես, պսպղում է ոսկու պէս: Այսպէս, այդպէս, այնպէս, նոյնպէս վերջապէս: Իէպի սէր, ինձ ասա, թոչում ես այդպէս արագ: Այս դէպքից յետոյ ծերը տուն դարձաւ: Դու պատմէ, թէ ինչպէս աստ անտէր ու խեղճ եմ ես. միշտ լալով, ողբալով կեանքս մաշուել, եղել կէս: Նա տէր ու տիրական չունի: Անտէր, տանուտէր, տէրտէր, պարտքատէր, տէրութիւն: Կէսօր: Նրա խոփը դէմ առաւ քարին: Նրանց դէմն առնելու հնար չկար. նա դէմքը ծածկեց: Դէմք, ընդդէմ. տիրադէմ ու թխմդէմ, լուսադէմին: Գօտին կապեց մէջքը: Մէջ, գեղամէջ, մէջտեղ: Նրանց մէջ վէճ ու կռիւ է սկսուած: Ինչո՞ւ չշահենք մէկ մէկու սիրտ, թէկուզ ցամաք հացով: Տանուամէկ, քսանամէկ, երեսունամէկ: Նա երեսնաներից մէկի թևիցն էր բռնել, մէկէլին շալակն առել:

2. Փայլուն արեւ արդէն մայր մտաւ: Դու ի՞նչ պիտի տաս իմ այսքան աշխատանքի փոխարէն: Աղուէսի գունչը խաղողին չհասաւ, ասաց խակ է: Պաս օրը իւզի տեղ ձէթ են բանեցնում: Այ թէ լաւ արին, ծերո՞ւկ դու անդէտ: Երախտագէտ, տգէտ, գրագէտ, հնարագէտ: Գութանին եօթը զոյգ գոմէջ էին լծած: Զաղացաքարերը որ պտտում են, ամբողջ շէնքը դրոպում է: Մէկ նայիր վրադ, շէնք ու շնորհքիդ: Տնաշէն, քարաշէն, փայտաշէն, շէնանալ, շէն գիւղ, շէն տուն: Իմ մայրը շատ բարի էր, շատ անձնանուէր: Նուէր: Հրէս եկաւ եղբայրս:

3. Ո՛ւր էր գէթ մի ժամ, մի ըոպէ տեսնէի նրան: Իմ ունեցած չունեցածս այս տունն ու պարտէզն է: Դու պէտք է կատարես հօրդ պատուէրը: Պէտք, անպէտք, պէտքական: Նա այսօր մեծ հրաւէրք ունի: Հրաւէր: Թիթեռները, բզեզներն ու կրէտները թռչում էին ծառերի շուրջը: Բոլորը մէկէն յարձակուեցին նրա վրայ: Կօշկակար Մատթէոսն ու Թադէոսը շատ պատուէրներ էին ստանում: Մենք տուն չունինք, ոչ ապաւէն էս լայն արձակ աշխարհում: Պէտք է օրէնքով դատաստան անել, որպէս զի արդարութիւն լինի: Մարդկօրէն, բնականօրէն, օրէնսդիր, անօրէն:—

4. Մարդ չպէտք է ուրիշին անէ՞ք տայ: Ինչո՞ւ ես այդպէս խոժոռած ու խէթ խէթ նայում: Այսօր մեր դպրոցում հանդէս կայ: Զօրահանդէս: Մենք չպիտի վրէժ առնենք ուրիշներից: Վրէժխնդրութիւն: Ծնորհակալ եմ, աղուէս պարոն, որ ինձ չես մոռացել, թէպէտ իմ միտս չէ, թէ մենք ե՞րբ ենք բարեկամ եղել: Սկսեցին դողալ, երերուել եղէգնի պէս: Բարձր ժայռերից՝ փրփրած, կատաղած մի ջրվէժ էր իջնում: Գահավէժ անել: Ինչո՞ւ մենք չենք հալածում քէնն ու ռիւր մեր սրտից: Օրէնք քանի՞ անիծում է նա (կոյրը) իր աշխարհ գալը: Գիւղացին իր պարտէզից շահ չունեցաւ այն տարին. գիտէք ինչո՞ւ, — բարի էշը՝ չիմանալով գործի լաւն ու գէշը՝ թռչունների ետեւից վազվզելով անդադար՝ կոխտուել էր պարտէզի ամեն բանը իշաբար: Գէշ(=վատ), գէշանալ, գէշութիւն: Գէշ=լէշ, դիակ, գիշատիչ:

5. Նա իր վրան էր առել իւր բոլոր գէնք ու զրահները: Անդէն, սպառազէն: Փուշն արդէն յոյսը հատած, ճանկ ու ատամ սուր պատրաստած, կողքովն ով որ անց է կենում, քաշում է փէշն ու հարցնում, թէ չե՞ս տեսել մէկին ու մէկին, է՛ն լիւր ճային կամ չղջիկին: Մէզ, մառախուղ պատեց երկիրը: Ո՛ւր է, ասաց, ի՞նչ է կորել, դուրս կանչեցէք՝ գայ ասպարէզ: Նրանց խօսի գէզն այրուեց: Ինչ գէր են այս խոզերը: Գէրութիւն, գիրութիւն, գէրանալ, Գիրանալ: Եկէ՛ք դահիճներ, ծովը ձգեցէք կախարդ պառաւին ու էս հրէշին: Նա էլ մեր հին ծէսերը չի բանեցնում: Նրա վէրքն անբուժելի է:

6. Մայր, մէր, սանամէր, — հայր հէր, — եղբայր, ախպէր, — վայր ընկնել, վէր ընկնել, — գայլ, գէլ, — ժայռ, ժէռ, — ծայր, ծէր, —

ձայն, ձէն:—Վրայ, վրաս, վրէս,—տղայ, տղադ, տղէդ,—երեխայ, երեխայք, երեխէք,—տղայ, տղայք, տղէք:—Այս այդ, այն,—էս, էդ, էն, էսպէս, էդպէս, էնպէս,—այծ, էծ:

Յ բաղաձայն: Բառերի սկզբում յ տառն արտասանուած է իբրև չ բաղաձայն:

Յ-ով սկսուող բառերը սակաւաթիւ են:

ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ:—1. Ամբողջ օրը խաղում ես, ինչպէս է, որ չես յոգնում: Յոգնութիւն Յոգնակի:—Մէկէլ յանկարծ հիւանդացաւ սիրուն թռչնակը, էլ չերգեց և լռեց յաւիտեան: Յանկարծակի, յաւիտեական:—Յովսէփը Յովհաննէսի հետ յետ դարձաւ քաղաքից: Յետադէմ, յետի ոտներ, յետին անգամ: Այս դէպքից յետոյ շատ օրեր չանցան, պառաւի այծերն էլի մօտ եկան: Յունիսը մեզ խոտ է տալիս, իսկ յուլիսը առատ ցորեն: Դեկտեմբերին ձիւն է գալիս, յունուարին ծածկում սար ու ձոր: Էն առանց քեզ էլ կարող եմ ստանալ, ինձնից փրկութիւն դու բնաւ մի յուսալ: Յոյս, յուսահատութիւն, Յուսիկ:—Քեզ հրամայում են պատուաւոր խօսքով, որ իսկոյն դնաս քո յօժար կամքով: Շուտով սառ հողի տակ կը պառկեմ այստեղ մենակ՝ թողնելով հօրս սրտում միշտ ցաւալի յիշատակ: Յիշել, յիշողութիւն:—Մեր զօրքերը յաղթեցին թշնամուն: Յաղթական, յաղթութիւն, անյաղթ:

2. Դասարանի յատակը տախտակած է: Անյատակ ծով:—Ո՞ր յօդուածն է այժմ ձեր դասը:—Յակոբը շատ յամառ տղայ է: Յամառութիւն, յամառել:—Նա գիշեր ցերեկ աշխատում է. և ի՞նչ է վարձքը,—չոր հացի փշրանք, անպէտք ցնցոտիք, յարդէ անկողին:—Մեր տունը երկու յարկանի է. յարկ, վերնայարկ:—Մարդ յաճախ իր ստուերից էլ է վախենում:—Քո արածը մեծ յանցանք է: Յանցաւոր:—Նա յագենալ ասածը չգիտէ: Յագենալ, անյագ (անկուշտ):—Առ այս մօրթին ինձ համար. մի գտակ կարի ինձ յարմար: Յարմարուել, յարմարութիւն:—Ձմեռն եկաւ և ամեն ինչ յափշտակեց ու տարաւ: Յափշտակութիւն:—Այսօր ես ձեզ կանչել եմ, որ վերջին կամքս ամենքիդ յայտնեմ: Յայտնի, անյայտ:—Ով կը յանդգնէր նրա վրայ յարձակուել: Յանդուգն, յանդգնութիւն: Յարձակում:

3. Այն ժայռի տակից մի յստակ աղբիւր է բղխում խոխոջիւղով:—Երկինքը մթնեց, յորդ անձրև թափեց: Յորդանալ, յորդութիւն, յորդառատ:—Յովհանն ինչքան ցանկանում էր հարստա-

նալ, չէր յաջողում: Յաջող, յաջողակ:—Թագաւորը որ ծերացաւ, մօտեցաւ մահուան, չգիտէր, թէ ով կը յաջորդէր իրեն: Յաջորդ, յաջորդարար:—Մարդիկ պէտք է միմեանց յարգեն: Յարգանք, յարգել, յարգելի, յարգոյ:—Ինչո՞ւ ես ընկերիդ յիմար ասում: Յիմարութիւն, յիմարանալ:—Պառաւ խեղճ ալորին շատ յանդիմանեց: Յանդիմանութիւն:—Քրիստոս յարեաւ ի մեռելոց: Յարութիւն, յարուցանել:—Մասիսի գագաթը յաւերժական ձիւնով ծածկուած է:

4. Իմ ժառանգն ո՞վ է, ո՞ւմ պիտի յանձնեմ ես իմ կարողութիւնը: Յանձն առնել:—Ինչո՞ւ ես զուր տեղը յուզում: Յուզմունք: Յուպոսն ինքը հոտած է, հենց գիտէ բոյնն է հոտած:—Նա խոր յոգոց (յոգոց) հանելով հեռացաւ յուշիկ քայլերով: Յուշարձան, յուշարար:—Յիսուս մկրտուեց Յորդանան գետում:—Բայց նոքա միշտ յեղյեղուկ պղտոր ջրով եզերքին դարիւ դարիւ խփելով՝ փախչում էին լալագին: Յեղափոխել, յեղաշրջել:—Եղբայրս յիսուն տարեկան էր, ներք մեռաւ: Նրա յուղարկաւորութիւնը կատարեցին մեծ հանդիսով:—Յատուկ խնդրում եմ՝ չմոռանաս ինձ: Յատկութիւն, առանձնայատուկ:—

Վ հնչիւնը գրւում է Վ, և տառերով և ու երկտառով:

1. Վ գրւում է բառերի սկզբում և ո ձայնաւորից յետոյ. օրինակ՝ վագել, վրաս, վաստակ, վայրենի, վարձ, վեր, վիճել վտանգ:—Մով, կով, հոտ խռովել, թոթովել, վրդովմունք, ապահովութիւն:

2 Դ. (Ը) գրւում է ձայնաւորներից յետոյ. օրինակ՝ ագռաւ, հաւ, ցաւել, տերև, երևել, թեթևութիւն, թիւ, հիւանդ, շիւարբել:

3. Ու վ հնչիւնով գրւում է բառերի մէջ բաղաձայնից յետոյ և ձայնաւորից առաջ. օրինակ՝ նուէր, պատուէր, ստուեր, Աստուած, յօդուած, խօսուեցաւ, դուարթ:

Այս վ-հնչիւն ու-ի տեղ միայն և (երբեմն և վ) տառով գրողներ եւ կան:

Երբ վ-հնչիւն ունեցող ու-ից առաջ լսւում է ը ձայնաւորը, տողադարձի ժամանակ, ինչպէս՝ և ոտանաւոր-

ների մէջ, գրում են ըս ձևով, ինչպէս՝ զը-ւարթ, նը-ւէր
գտնը-ւել: Նոյնպէս գրում են՝ ծըւծուալ, սըւսուալ, կամ
ծըւծըւալ, սըւսըւալ:

Բ, Գ, Դ, Զ, Է, տ ա ու ե ը ը յաճախ արտասան-
ւում են ինչպէս փ, ք, թ, ց, չ, կամ պ, կ, տ, ծ, ճ, օ-
րինակ՝ որք, ծագել, որդի, վարձ, արջ, բառերի մէջ:


Ղ տ ա ու ը բաղաձայններից առաջ սովորաբար արտա-
սանւում է իբրեւ լս, ինչպէս եղբայր, ողբ, աղջիկ:

ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ:—1. Ով որ չունի կարգ ու կանոն, նա աս-
ւում է անկիրթ մարդ. կարգ կանոնը մանկանց համար են գովա-
կան սիրուն զարդ. կարգին, կարգել, կարգաւորել, —մարդութիւն,
մարդիկ, —զարդարել, զարդարանք:—Ընդունեցէք, խնդրեմ, իմ
յարգանքները:—Ընդունել, ընդունարան, —խնդիր, խնդրուածք, —
յարգելի:—Կատուն դունչը սրբեց թաթիկներով: Սուրբ, սրբու-
թիւն:—Գարբիէլը չուխայ չունի, միշտ անում է սուգ ու լաց:
Սգալ, սգաւոր:—Մանիր թելեր հաստ ու բարակ, որ ես հոգամ
իմ ցաւեր:—Հոգս, հոգացողութիւն, անհոգ:—Օձի գլուխը որ ցա-
ւի, ճանապարհի մէջ տեղում կը պառկի: Ճանապարհորդ, ճանա-
պարհուել, —մէջ, մէջք, միջին, միջնորդ:—Մէկի օձիքից (եախից)
բռնել: Արեւ յաղթեց ամպերին, շողքը ձգեց սարերին: Ձիգ, ձգել, գցել:

2. Միայն խեղճ որբը ոտքերը բոբիկ, տկո՛ր ու քաղցած,
մի տան պատի տակ մնաց կուչ եկած: Խեղճութիւն, խեղճիկ, —
քաղց, —որբանալ, որբութիւն: Ամեն մարդ իր մեռելի վրայ է
ողբում: Ողբ, ողբաձայն:—Սագիկ մագիկ, իմ սիրունիկ, ուր ես
գնում կամաց կամաց, ձագուկներդ չորս կողմդ առած: Ես կը խըն-
դրեմ իմ մայրիկիս, որ ժողովէ քո փետուրներ և ինձ համար
շինէ բարձեր: Ձագ, սագ, բարձ:—Որդի, դեռ չե՞ս վերջացրել
գրել կարգալի:—Որդեակ, —վերջ, վերջին: Այս փոքրիկ աղ-
ջիկն ամբողջ օրը կարդում է ու չի յոգնում: Յոգնութիւն: Ող-
ջոյն ձեզ: Ողջ, առողջ:—Վարդ ծաղկին լինինք նման:
Վարդենի, Վարդուհի:—Վարդանը յետ դարձաւ այգուց: Դարձ,
վերադարձ, այգեպան:—Թագաւորը հրամայեց որսորդներին, որ
կրիսի հետքը գտնեն: Թագ, Թագաւոր, Թագուհի, —որսորդ,
ճանապարհորդ, մնացորդ, քառորդ, անցորդ, ձախորդ, յաջորդ,
աւելորդ:

3. Արեգակը ծագում է ժամը վեցին: Արևածագ, ծէգը բաց-
ուելիս: Ծագում:—Հինգշաբթի կար կը կարեմ, ուրբաթ օրը պաս
կը կենամ, շաբաթ օրը ժամ կը գնամ: Երկուշաբթի, երեքշաբ-
թի, չորեքշաբթի:—Մայիսին բացւում է վարդը, սոխակն երգում
անուշակ: Երգ, երգեցողութիւն:—Օգոստոսը տանձ ու խնձոր է
տալիս և ուրիշ հասուն մրգեր: Միրգ, մրգաստան:—Էսօրուայ
փուշը, էգուցուայ նուշը: Կուշտը քաղցածին մանր կը բրդի:
Մածնի բրդուճ, բրդել—փրթել:—Թալին, Թալիշ, Մաստաբա,
գլալի պոչը դէսն արա: Դղալ, դգալ:—Շունը որ հաչել (հաջել)
սկսի, էլ չի դադարիլ: Դադար, անդադար:—Նրանք միմեանց
օգնեցին: Օգնութիւն, օգնական:—Կալը կալսեցին, ցորենը կրեցին
ամբարը լցրին, իսկ յարդը մարագը:—Օրիորդը հագաւ իր նոր
հագուստները, զուգուեց զարդարուեց: Ձարդ, զարդարանք: Հա-
գուստ, հագիս, հագիդ, հագին:—Նրա ժամացոյցի շղթան շատ
նուրբ է շինած: Նրբանայ, նրբութիւն:—Հիւան ուրագով տաշեց:

4. Ա՛խ, ե՛րբ կը լինի, որ ես էլ սրանց պէս կարգամ, երգեմ.
արդեօք կարժանանամ այդ օրին: Վերջապէս փափագիս հասայ:
Ե՛րբ, երբեք (երբէք):—Անձրեն եկաւ ամենքին թրջեց: Թրջել,
թռչել: Ա՛յ տղայ, անունդ Աւագ, քեզ կուտեցնեմ մեղր ու կա-
րագ:—Նապաստակն արագ առաջ վազեց և որսորդից ա-
զատուելով՝ սկսեց կանաչ դաշտում աղատ համարձակ խաղալ:—
Արձակ, համարձակ, ընդարձակ, արձակել, յարձակուել:—Ա՛յ
կացին ի՞նչ քաջ ես, — թէ որ քաջ եմ, ինչո՞ւ է դարբինն ինձ
ծեծում: Քաջութիւն, քաջալերել, դարբնել, դարբնոց:—Խղճս,
խղճս անտուն, անտէր աղքատին: Խիղճ, խղճատանք: Աղքատա-
նալ, աղքատութիւն:—Սաստիկ շոգ է: Շոգել:—Չորս եղբայր
են. չորսն էլ ջոկ ջոկ ունին հասակ, պարզեմներն են հազար տե-
սալ: Փոքր եղբայրն է պատանի, բողբոջ, տերև, սաղարթ ունի:
Երկրորդ եղբայրն է երիտասարդ, տալիս է մեզ անձրև առաս:
Երրորդ եղբայրն է չափահաս, մրգերով լի ունի թաս: Չորրորդ
եղբայրն է ծերունի, ցուրտ ու խաւար շալկած ունի: Հինգե-
րորդ, վեցերորդ, եօթներորդ, ութերորդ, իններորդ, տասներորդ:
Մոծակը թռաւ, բոլոր կենդանիների արիւնի համն առաւ և տե-
սաւ, որ ամենից քաղցրը մարդու արիւնն է: Կենդանի, կենդանու-
թիւն, — իմ նանը, որ էլք: Կի շատ լաւ կին էր. ժամ ու պատարագ
նա շատ կը սիրէր:



5. Քո տետրակը քանի՞ թերթ թղթից է կազմած: Թուղթ թղթավաճառ:—Մեզնից շատ առաջ կար մի թագաւոր, հոգով (հոգւով) դեռ արի, գլխով արևոր: Առաջ, առաջին, առաջնորդ: Հոգեակ, հոգևոր:—Լսէ, ժողովուրդ, լսէ անխռով, հարազատ քոյրս գլուրեց ինձ ծով:—Սորհուրդ, խառնուրդ:—Աղբիւրները ցամաքեցին:—Նա ինձ երկար կեանք մաղթեց: Մաղթանք:—Համբերութիւնը կեանք է: Համբերել, անհամբեր:—Մէկի աջը համբուրել: Համբոյր:—Նանը գոգնոց կապած՝ հաց է թխում: Գոգ:—Վարձիդ համար միամիտ մնա: Վարձը, վարձատրել:—Շաբաթը մի անգամ գնում էի նրանց մօտ:—Թաղէսը գլխին գդակ չունէր:—Դեղձի ընտիրն երեան կը լինի, իսկ շագանակինը որտեղ:—Կազնին իր գազաթը դէպի երկինք էր բարձրացրած: Բարձր, բարձրութիւն: Այն ռով է կանգնած ամբիոնի վրայ, դողդոջուն ձեռքերն երկինք ամբարձած: Բարձած, բարձել, համբարձել, համբարձում:

6. Ցորեն, գարի գերանդիով հնձեցին, խուրձ կապեցին, բարդ բարդեցին դաշտում: Բարդութիւն: Գարնանը գետերը յորդանում են և ջրերը պղտորում:—Հասկերը՝ ջարդուած զօրքի պէս գետին փռուեցին:—Այստեղ օդը մաքուր չէ:—Պայծառ արեգակը բարձրացաւ երկինքը և ոսկեփայլ ճառագայթները տարածեց երկրի վրայ:—Սլուրդը միշտ միջատներով, որդերով ու թրթուրներով է կերակրում: Որդներ:—Իմ առաջին ծանօթը մեր կեղծաւոր փիսօն էր: Կեղծ, կեղծել:—Նրանց ճամպին յափշտակեց արիւնարբու թշնամին: Հարբել, հարբեցութիւն, արբենալ:—Օճն արագ առաջ սողալով՝ մտաւ ձեղքի մէջ և աղին ոլորեց, գալարուեց:—Ինչո՞ւ արգելեցիր նրան: Արգելք:—Ջուրը կը խեղդէ, կրակը կայրէ: ով այս գիտէ, թող ինքը փորձէ: Փորձ, փորձանք, փորձութիւն, անփորձ:—

7. Ծերը գնում էր, ձուկ բռնում ծովից, պառաւն էլ տանը թել մանում բրդից: Բուրդ:—Վերջը, երբ փոքր ինչ բարկութիւնն իջաւ, մոռութը կախած՝ ծերունուն դարձաւ: «Անշնորհ ծերուկ, տնակ ուզեցիր. երկի քո մէջ մեծ բան կարծեցիր. յետ դարձիր, անխելք, յետ դարձիր գնա, ոսկի ձկնիկին իմ կողմից ասա, որ էլ չեմ ուզում միայլ գեղջուկ կին»: Ծերունին դարձեալ ծովի ափ գնաց: Այս անգամ տեսաւ ծովը վրդովում: Ծնորհաւոր գեղջուկ: Վիզը դարդարած էր մարգարիտներով:—Բախտն ու խելքը յաջողութեան և բնորոշակութեան պէս միմեանցից անբաժան

պէտք է լինին:—Օգնութեանդ փոխարէն ես քեզ՝ իբրեւ ջանքիդ վարձ՝ կը տամ մի զոյգ եղ:—Ասա ինձ, ռով ես, նողկալի էակ. ինչո՞ւ ես չեթեւի դու այդ թփի տակ, ագռաւի նման կռուում անդադար:—Բնի մօտ, կտուրի ամենաբարձր տեղը, լարի նման ձգեալած և մի ոտը վեր ծալած՝ կանգնած էր որձակ արագիլը: Որձ, որձաքար:—Արագիլները սաւառնում էին կանաչ մարգագետնի վրայ:—Սոզը մինչև կոկորդը կերաւ ու լցուեց, ապա կաղնու տակ ձգուեց, մրափեց:—

8. Սարդը տան մի անկիւնը քաշուած՝ իր ցանցն էր հիւսում ճանճերին թակարդի մէջ ձգելու համար:—Մեղուն տղտղաց, տղտղացին ձագերը. արջը չքաշեց իր բրդոտ թաթերը, ողջ բունը քանդեց, ձագերը ջարդեց, խորիսխը հանեց, լափեց, լափլափեց:—Այ դու անպիտան կենդանի, ինչ իրաւունքով և ո՞ր օրէնքով համարձակուել ես իմ մաքուր ջուրս քո պիղծ բերանով այդպէս պղտորել աւազով, ցեխով և հազար տեսակ աղբով: Պղծել, պղծութիւն, աղբանոց:—Ա՛խ Աստուած, ի՞նչ է մեղքս:—Նաբեբայ, ես ձեզ լաւ եմ ճանաչում:—Ո՛չ, սուտ ես խօսում, անարժան որդի, խաբում ես հօրդ: Նաբէութիւն, խաբուսիկ:—Անցորդը կանգնեց դարբնոցի դիմաց, դարձաւ հեգնանքով երկաթին ասաց. «Ինչ ես հաւաքել աշխարհը գլխիդ, անճոռնի մետաղ, գոհիկ, կոպիտ»: Հեգնել, հեգնութիւն. աշխարհը, աշխարհական:—Նրա աչքերը գիշերն էլ լոյս են տալիս ճրագի նման: Ծրագու:—Պէտք է ամեն բան առաջ ստուգել և ապա խօսել:—Ընկերութեան մէջ խարդախութիւնից վատ բան չկայ:—«Եղբայր արձագանգ», մուրճն ասաց մի օր, «քո ձայնն ինչո՞ւ է իմից զօրաւոր»: Արձագանգ, արձագանք:—Առիւծը երդւում էր, որ վերադարձին որսից ամենքին հաւասար լաժին կը հանէ: Մենք պէտք է մեր հին տունը շուտով նորոգենք:—Կարան անառիկ բերդ էր համարւում:

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՒԱԾ

ԲԱՌ, ԽՕՍՔ ԵՒ ԱՍԱՅՈՒԱԾ

ԲԱՌԵՐԻ ԻՄԱՍՏԸ

Ամեն բառ ունի մի նշանակութիւն կամ իմաստ: Մի և նոյն բառը տեղին նայելով կարող է յաճախ մի քանի նշանակութիւն ունենալ կամ տարբեր տարբեր առմուճնքներով գործածուել: Օրինակ՝ այս մարդը սրտի (խսկական իմաստով) հիւանդութիւն ունի: Նա սրտով (քաջ) մարդ է: Մարդու աչք: Պահարանի աչք:

Նոյնան իշ ասուում են այն բառերը, որոնք բոլորովին նոյն նշանակութիւնն ունին. օրինակ՝ զնալ, երթալ, այտ, թուշ:

Համան իշ ասուում են այն բառերը, որոնք նշանակութեամբ իրար նման կամ մօտիկ են. օրինակ՝ զարմանալ, հիանալ, զմայլել:

ՊԱՐԶ, ԲԱՐԴ ԵՒ ԱԾԱՆՅԱԿԱՆ ԲԱՌԵՐ

Բարդ ասուում են այն բառերը, որոնք կազմուած են

երկու բառից. օրինակ՝ Թանաքաման, մարդասէր կազմուած են Թանաք և աման, մարդ և սէր բառերից:

Ածանցական ասուում են այն բառերը, որոնք կազմուած են մի բառից կամ արմատից և մի ածանցից, այսինքն մի աննշանակ մասնիկից, որ դրուելով բառի կամ արմատի վրայ սկզբից կամ վերջից՝ նոր բառի նշանակութիւն է տալիս նրան. օրինակ՝ գործ բառից կազմուում են՝ գործել, գործիչ, գործաւոր, անգործ,—գործ բառից՝ գործութիւն, դժգոհ,—գիտութիւն, տգիտութիւն:

Պարզ ասուում են այն բառերը, որոնք ոչ բարդ են, ոչ ածանցական: Օրինակ՝ մայր, մարդ, ծեծ, շարժ, աշխարհ:

Արմատ ասուում է բառերի այն պարզ մասը, որ մենակ չի գործածւում իբրեւ առանձին բառ, այլ ածանցների հետ միացած, կամ ուրիշ բառերի ու արմատների հետ բարդուած: Օրինակ հի արմատից, որ իբրեւ բառ չի գործածւում, կազմում են՝ հիանալ, հիացում, հիասքանչ, հիասթափուել:

Յօդական Ա:—Բարդ և ածանցական բառերի երկու բաղադրիչ մասերի մէջ սովորաբար մտնում է աւ ձայնաւորը, որ կոչւում է յօդակաւ. օրինակ՝ ազգասէր, զանգակատուն: Երբ երկրորդ բաղադրիչ մասը ձայնաւորով է սկսւում, յօդակաւ չի դրւում. օրինակ՝ ազգօգուտ, արքայորդի, ջրանցք:

Չայնափոխութիւն:—Բառակազմութեան ժամանակ երբ բառն աճում է, այսինքն ետեւից նոր վանկ կամ վանկեր են աւելանում, վերջին վանկի է, ի, ու ձայնաւորները և նա, նայ, ոյ երկբարբառները սովորաբար փոխւում են՝

1. է դառնում է ի, օրինակ՝ սէր, սիրել հանդէպ, հանդիպել, վէպ, վիպասան:

2. ի և ու դառնում են ը կամ դուրս են ընկնում:

օրինակ՝ բժիշկ, բժըշկել, բժշկել. ամիս, ամսական. լուծ, լրծել, լծել. անասուն, անասնական,

3. Եւ դառնում է ն. օրինակ՝ մատեան, մատենագիր:

4. Եւս դառնում է է. օրինակ՝ գործունեայ, գործունէութիւն. քրիստոնեայ, քրիստոնէական:

5. Ոյ դառնում է ու. օրինակ՝ ծոյլ, ծուլանալ. ողջոյն ողջունել:

ՈՒՂԱԳՐՈՒԹԻՒՆ:—Բարդ բառերի երկրորդ բաղադրիչ մասն երբ սկսւում է ը, օ, վ, յ, տառերով, բառերի միջում ևս պահւում են այդ տառերը: Օրինակ՝ դասընկեր, նորընծայ, հաւընտիր, հիւընկալ, խոչընդոտ, նախընթաց,—ազգագուտ, բարօրութիւն, անօգնական, բացօթեայ (օթեան բառի արմատից), անօրէն, ջրօրհնէք,—զրաւաճառ, զօրավար, կառավարել, լուսավառ, արագավազ բազմավաստակ, անվնաս, անվարձ, այսպէս և թուփալ, ճլվլալ, ծլվլալ և այլն,—անյատակ, բազմայաղթ, սևայօն (յօնք, ունք բառից), անյագ, քաջայայտ (յայտ, յայտնի), սիրալօթար և այլն:

Ածանցներ, որոնք է—ով են գրւում.

1. էք,—Մեռնօրհնէք, արժէք, կողպէք:
2. վտ,—Ծաղկաւէտ, խոտաւէտ, հոտաւէտ:
3. եղէն,—կանաչեղէն, մսեղէն, արծաթեղէն.
4. ւէն,—հայերէն, ռուսերէն, յունարէն.

ԱՆՈՒՆ

Անուն կամ գոյական անուն կոչւում են այն բառերը, որոնք ցոյց են տալիս առարկաներ, լինի մարդ, կենդանի թէ մի ուրիշ բան: Օրինակ՝ աշակերտ, մի, քար:

Առարկայ ասելով հասկացւում է՝ ամեն ինչ որ կայ, բնութեան մէջ անկախ գոյութիւն ունի, կամ մենք մտածում ենք, թէ անկախ գոյութիւն ունի: Բնութեան մէջ անկախ գոյութիւն ունեցող բաները ասւում են Թանձրացական կամ ֆիզիկական առարկաներ. դրանք նիւթական բաներ են և ընկնում են մեր զգայարանների տակ: Օրինակ՝ դասարանում տեսնում ենք՝ սեղան, աթոռ, զրաւեղաններ, նստարաններ, պատեր, դուռ յատակ, աշակերտներ և այլն: Իսկ այն առարկաները, որ բնութեան մէջ անկախ գոյութիւն չունին, այլ միայն մենք մտածում ենք իբրեւ անկախ գոյութիւն ունեցող բաներ, ասւում են վերացական առարկաներ. դրանք նիւթական չեն և չեն ընկնում մեր զգայարանների տակ, այլ միայն մտքով իմանում ենք թէ կան: Օրինակ՝ քաջութիւն, հիւանդութիւն, չարչարանք, փառք:

Անունները լինում են՝ յատուկ և հասարակ:

Յատուկ անուն ասւում են այն բառերը, որոնք ցոյց են տալիս մի հատ առարկայ առանձին վերջրած, այս ինչ կամ այն ինչ առարկան միայն:

Հասարակ անուն ասւում են այն բառերը, որոնք կարող են արուել թէ նոյն տեսակի բոլոր առարկաներին և թէ նրանցից մէկին միայն: Օրինակ՝ Երասիս և զետ բառերից Երասիս յատուկ անուն է, իսկ զետ՝ հասարակ անուն. Երասիս կոչւում է գետերից մէկը միայն առանձին վերջրած. իսկ զետ կարող են կոչւել թէ բոլոր նոյն տեսակի գետացիւն ջրերը և թէ նրանցից մէկը, այս ինչ կամ այն ինչ գետը: Այսպէս հասարակ անուն են՝ վանք, լեռ, աշխարհ, թագաւոր, իսկ Էջմիածին, Մասիս, Հայաստան, Տիգրան յատուկ անուն են:

ՈՒՂԱԳՐՈՒԹԻՒՆ.—Յատուկ անուններն ու նրանցից անբաժան մականունները, և իբրեւ յատուկ անուն առնուած բառերը սկսւում են գլխատառով: Յատուկ անուն են.

1. Աստուած բառը և նոյն իմաստով առնուած բառերը՝ Արարիչ, Տէր, Նախախնամութիւն.

2. Հեթանոսական աստուածներին անունները՝ Արամազդ, Վահագն, Անահիտ.

3. Անձերի անունները՝ Ներսէս, Յովսէփ,—Աշոտ Երկաթ, Մեծն Տիգրան, Ղազար Փարպեցի, Արտաշէս Երկրորդ.

4. Աշխարհագրական անունները՝ Մասիս, Եփրատ, Ռուսաստան, Երեան, Սև ծով, Ալպեան լեռներ.

5. Գրուածքների անունների առաջին բառերը. օրինակ՝ Նա շաբաթ երեկոները եկեղեցում «Լոյս զուարթ» էր երգում: Կարդացել ես Ծերեհնցի «Երկունք իններորդ դարում» վէպը:

Հասարակ անունների վերջում ա և ո տառերից յետոյ գրւում է անձայն յ. ինչպէս՝ փեսայ, ծառայ, երեկոյ:

Յատուկ անունների վերջում ա ձայնաւորից յետոյ յ չի գրւում՝ Աննա, Եւրոպա. իսկ ո ձայնաւորից յետոյ գրւում է՝ Յարոյ, Մարոյ, թէ օ տառով են վերջանում՝ Յարօ, Մարօ:

ՎԵՐԼՈՒԹՈՒԹՅՈՒՆ Որոշել անունները և նրանց տեսակները՝ բառերի տակը, գիծ քաշելով և գլխին գրելով հ. ա (հասարակ անուն), յ. ա. (յատուկ անուն): Օրինակ՝ «Երկու աղախին» (հ. ա.) Աննան (յ. ա.) և Կատարինէն (յ. ա.), քաղաք (հ. ա.) էին գնում: Նրանցից ամեն մէկը մի կողով (հ. ա) խնձոր (հ. ա) էր տանում:

ԱՆՈՒԱՆ ԹԻԻԼ

Անուան թիւը երկու տեսակ է՝ եզակի և յոգնակի: Եզակին ցոյց է տալիս մի առարկայ. իսկ յոգնակին՝ մէկից աւելի նոյն տեսակի առարկայ: Օրինակ՝ ծառ եզակի է, իսկ ծառեր՝ յոգնակի:

Յոգնակին կազմւում է եզակի թուի վրայ աւելանալով միավանկ անուններին սովորաբար եր մասնիկը (քար, քարեր), իսկ բազմավանկներին՝ ներ (քաղաք, քաղաքներ):

Բազմավանկների վերջի անձայն յ-ն դուրս է ընկնում (ծառայ, ծառաներ): Միավանկ անունների մէջ ի, ո ձայնաւորները սովորաբար փոխւում են ը ձայնաւորի, որ չի գրւում. օրինակ՝ գիրք, զրքեր, զրքեր. եւ ջուր, ջրքեր, ջրքեր:

ՎԱՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ— Կազմել հետեւալ անունների յոգնակին.

1. Օր, հաց, փայտ պատ, ձեռք, բառ:

2. Միս, գիր, վիզ, գին, գիծ, բիծ, թուղթ, շուն, թուզ, սուր, գուր, գունդ:

3. Փողոց, պարտէզ, դպրոց, դասարարան:

4. Փեսայ, քահանայ, սատանայ, գաթայ:

5. Սևահող (սևահողեր), անձրևաջուր, զօրագունդ, քարաժայռ, գրատուն, դասագիրք:

6. Մատ (մատներ), ոտ, ձեռ, ալ, գառ, եզ, դուռ, մուկ, լեռ, թռու:

ԲՍՅ ԵՒ ԽՕՍԲ

✕ Խօսքը մտածութեան արտայայտութիւնն է բառերով: Խօսքը կազմւում է մի կամ մի քանի բառից:

Այն բառերը, որոնք մենակ խօսք են կազմում, կոչւում են քայ. օրինակ՝ զնացի, տեսաւ, եկար մի մի բայ և մի մի խօսք են:

Առանց բայի խօսք չկայ. օրինակ՝ այսօր հաց բառերը խօսք չեն կազմում, այսինքն մտածութիւն չեն յայտնում, այլ մի միայն հատ հառ իմաստներ: Հարկաւոր է մի բայ, որ այդ բառերից խօսք կազմուի. օրինակ՝ Այսօր հաց զնեցի կամ այսօր հաց թխեցինք: Գնեցի, թխեցինք բայերը մենակ ևս կազմում են մի մի խօսք:

Ամենայն բայ ունի ըստիմաստ, դէմք և թիւ:

Բայի մաստը ցոյց է տալիս եղելովիմ, այսինքն Գործողութիւն և զրուութիւն.

1. Անել, լինել, օրինակ՝ նա սիրտ արեց. լինում է,

չի լինում մի թագաւոր: Տանը մարդ կայ: Նա է:
2. Մի քան անել, մի քան շինել, օրինակ՝ Պօղոսը
գրեց:—Ի՞նչ արեց:—Դրեց: Երեխան մեծացաւ:—Ի՞նչ ե-
ղաւ:—Մեծացաւ:

3. Մի դրութեան մէջ լինել, օրինակ՝ նա նստած է:
Դէմքը ցոյց է տալիս անող կամ եղող առարկայի
գաղափար: Դէմքը երեք է. առաջին դէմք, երբ անող կամ
եղող առարկան խօսող անձն է (ես, մենք). երկրորդ դէմք,
երբ անող կամ եղող առարկան խօսակիցն է, որին դի-
մում է խօսողը (դու, դուք). երրորդ դէմք, երբ անող կամ
եղող առարկան ոչ խօսողն է և ոչ խօսակիցը, այլ մի
ուրիշ առարկայ. (նա, ինքը): Օրինակ՝ խօսողն ինքն իւր
համար ասում է՝ զնացի (1-ին դէմքի բայ). խօսակցի հա-
մար ասում է՝ զնացիր (2-րդ դէմքի բայ), իսկ մի ուրիշ
առարկայի համար՝ զնաց (3-րդ դէմքի բայ):

Թիւը երկու է՝ եզակի և յոգնակի: Բայը եզակի է,
երբ դէմքը մի առարկայ է ցոյց տալիս. բայը յոգնակի է,
երբ դէմքը մէկից աւելի առարկայ է ցոյց տալիս: Օրի-
նակ՝ զնաց եզակի է (նա մենակ գնաց). զնացին յոգնա-
կի է (նրանք բոլորը գնացին):

ԴԵՐԱՆՈՒՆ

Դերանունն ասում են այն բառերը, որ դրում
են անունների տեղ: Օրինակ՝ Տիգրանը պարագում է.
նա դեռ դասերը չի պատրաստել ասացուածի մէջ նա
դերանունն է և դրուած է Տիգրան անունան տեղ:

Խօսողն իւր անունան տեղ դնում է ես, որ կոչւում
է առաջին դէմքի դերանուն, եզակի ես, յոգնակի մենք.
իւր խօսակցի անունան տեղ դնում է եզակի՝ դու, յոգնա-
կի՝ դուք, որ կոչւում են երկրորդ դէմքի դերանուն. իսկ

մի ուրիշ առարկայի անունան տեղ դնում է եզակի՝ սա,
դա, նա. ինքը. յոգնակի՝ սրանք, դրանք, նրանք, իրենք,
որոնք բոլորը երրորդ դէմքի դերանունն են:

Բայերի դէմքն ու թիւը համապատասխան են դերա-
նունների դէմքին ու թուին այս պատճառով բայերը ո-
րոշելու համար՝ պէտք է բառերի հետ դնել վերոյիշեալ
դերանուններից մէկը՝ եզակի կամ յոգնակի. եթէ յարմար-
ուի, կը նշանակի վերցրած բառը բայ է: Օրինակ՝ մտայ,
մտար, մտանք, կարելի է ասել՝ ես մտայ, դու մտար,
մենք մտանք,—կը նշանակէ այդ բառերը բայ են:

ՎԵՐԱՌԻՊԻՐՈՒՄ:—Որոշել բայերը, նրանց դէմքն որ թիւը,
հետեւը դնելով համապատասխան դէմքի ու թուի դերանուններ:
Օրինակ՝ իշուկը մէկ սոխակ տեսաւ (նա տեսաւ), «մէկ ինձնայիր»
(դու նայիր), նրան ազգաց (նա ասաց): «Ասում են (նրանք ասում
են). դու լաւ ես երգում (դու ես երգում). բայց չգիտեմ՝ (ես չգի-
տեմ) ճիշտ են ասում (նրանք են ասում):

ԲԱՅԻ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ

Լրացում ասում են այն բառերը, որոնք դրուելով
բայի հետ՝ որեւէ կողմից պարզում, ամբողջացնում են
խօսքը: Օրինակ՝ Տիգրանն այսօր զնաց դպրոց խօսքի մէջ
Տիգրանն, այսօր, դպրոց բառերը պարզում են, թէ ո՛վ
գնաց, ե՛րբ գնաց, ո՛ւր գնաց: Դրանք զնաց բայի լրա-
ցումներն են:

Բայի լրացումները լինում են՝ ենթակայ, ստորոգեալ
և խնդիր:

1. Ենթակայ ասում են այն լրացումները, ո-
րոնք պարզում, որոշում են բայի դէմքը: Օրինակ՝ զնաց
բայը որ լսում ենք, իմանում ենք, որ մի երրորդ դէմքի
առարկայ կայ, որ կատարում է գնալու գործողութիւնը.
բայց այդ առարկան շատ անորոշ է մնում. չի իմացւում,

Թէ ով է կամ ինչ է: Իսկ երբ ասում ենք՝ Տիգրանը գնաց, Տիգրանը բառը լրացնում է բայի դէմքը, և մենք իմանում ենք թէ ով է գնացողը: Տիգրան լրացումը գնաց բայի ենթական է:

2. Ստորոգեալ ասում են նմ, լինիմ՝ բայերի հետ դրուած այն լրացումները, որոնք ցոյց են տալիս, թէ ենթական ինչ, ինչպիսի է, քանիսն է, և ինչ: Օրինակ՝ Զայլամը թուշուն է խօսքի մէջ թուշուն բառը դրուելով է բայի հետ՝ որոշում է, թէ Զայլամն ինչ է: Թուշուն ստորոգեալ է:

3. Խնդիր ասում են այն լրացումները, որոնք որեւէ կողմից պարզում, որոշում են բայիմաստը: Օրինակ՝ Տիգրանն այսօր դպրոցում տեսաւ Արտաշէսին խօսքի մէջ՝ այսօր ցոյց է տալիս, թէ երբ տեսաւ. դպրոցում ցոյց է տալիս, թէ ուր տեսաւ. իսկ Արտաշէսին որոշում է, թէ ում տեսաւ:

Բայի եւ ենթականի կանոնը: 1. ենթական և բայը թուով իրար համաձայն են դրում. եզակի ենթականի հետ եզակի բայ է դրում, յոգնակի ենթականի հետ յոգնակի բայ. օրինակ՝ Աբլարը կանչեց: Աբլարները կանչեցին:

2. Եթէ ենթական երկու և ավելի բառ է, բայը դրւում է յոգնակի: Օրինակ՝ Աննան և Կատարինէն քաղաք էին գնում:

ՎԵՐԼՈՒԹՅՈՒՆ: — Որոշել հետեւեալ խօսքերի մէջ՝ բայ, ենթական, ստորոգեալ և խնդիրներ՝ բառերի վրայ գրելով բ. (= բայ), հ. (= ենթական), ս. (= ստորոգեալ), խ. (= խնդիր): Օրինակ՝

Ա. Դաշտը ծաղիկներով զարդարուեցաւ: Դաշտը (հ.) ծաղիկներով (խ.) զարդարուեցաւ՝ (բ.):

Բ. Տիգրանը ջանասէր է: Տիգրանը (հ.), Զանասէր (ս.) է (բ.):

Գ. Մարդ եւ անասուն, գազան եւ թռչուն շտապով գործի գնացին: Մարդ և անասուն, գազան և թռչուն (հ.), շտապով, (խ.) գործի (խ.), գնացին՝ (բ.):

1) Ծերունին ցանցով ձուկ բռնեց ծովից:—Պառաւր տանը թիւ էր մանում բրդից: Որսորդներն ալետրին շատ յանդիմանեցին: Մըջիւնը բերանով պաշար էր կրում:

2. Վարդենին ու փշենին բուսել էին միատեղ:—Կատուներն ու շունը սաստիկ կռուեցին: Եղբայրն ու քոյրը գնացին դրօսնելու:

3. Աստղը պայծառ է: Եղբայրս նկարիչ է: Դուք աշակերտ էք: Նա ուսու է: Ամառը եղանակը շոգ է լինում:

Այս խօսքերի ենթական դարձնել յոգնակի, իսկ յոգնակին՝ եզակի: Օրինակ՝ ծերունիները ցանցով ձուկ բռնեցին ծովից:

ԿՈՂՄՆԱԿԻ ԽՆԴԻՐՆԵՐ

Բայի լրացումները, ենթական և խնդիրներն ևս իրենց կողմից կարող են լրացումներ ունենալ, որոնք կոչւում են կողմնակի խնդիր: Օրինակ՝ Մեր դաշտը զոյնըզոյն ծաղիկներով զարդարուեցաւ խօսքի մէջ՝ դաշտը ենթակայ է, ծաղիկներով խնդիր է զարդարուեցաւ բայի, իսկ մեր որոշում է դաշտը ենթականի, թէ ում կամ որ դաշտը. զոյնզոյն որոշում է ծաղիկներով խնդրի, թէ ինչպիսի ծաղիկներով: Մեր, զոյնզոյն բառերը կողմնակի խնդիր են:

Կողմնակի խնդիրներն ևս կարող են իրենց կողմից լրացումներ ունենալ և այլն: Օրինակ՝ Զաղացից եկողի երեսն ալիւրոտ կը լինի խօսքի մէջ Զաղացից կողմնակի խնդիր է եկողի բառի. եկողի կողմնակի խնդիր է երես բառի. երես ենթակայ է կը լինի բայի. ալիւրոտ ստորոգեալ է կը լինի բայի:

Կողմնակի խնդիրներն անբաժան են ֆնում իրենց խնդրառուից, այսինքն այն բառից, որի խնդիրն են լինում: Օրինակ՝ Մեր ծերունի ձկնորսը բռնեց մի ոսկի ձրկնիկ խօսքի մէջ ձկնորսը ենթական և ձկնիկ խնդիրը կա-

ըող են բայից յետ ու առաջ ընկնել, բայց նրանց խնդիր-
ները՝ մեր ծերուկ,—մի ոսկի միշտ անբաժան են մնում
իրենց խնդրառուից. ինչպէս՝ Մի ոսկի ձկնիկ բռնեց մեր
ծերուկ ձկնորսը: Մեր ծերուկ ձկնորսը մի ոսկի ձկնիկ
բռնեց:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹԻՒՆ:—Արտագրել հետեւալ խօսքերը կողմնակի
խնդիրների տակ մի գիծ քաշելով, իսկ նրանց խնդիրների տակ,
երկու գիծ և այլն: Օրինակ՝ Ոսկի (1 գ.) ձկնիկը մարդկային (1 գ.)
լեզուով աղաչեց ծերին: Պառաւը նստած էր հին (2 գ.) խուղի
(1 գ.) շեմքում: Բարձր (3 գ.) սարերից (2 գ.) իջնող (1 գ.)
վտակը հոսում էր խիտ (1 գ.) անտառով:

Ջանասէր մանուկը պատրաստում էր իր դասերը: Փայլուն
արևի շողքն ընկել էր նրա գրքին և շարունակ հրաւիրում էր
սիրուն մանուկին, որ դուրս գնայ խաղալու:—Մեր տղան շատ է
սիրում առաւօտեան ծագող արեգակը, դաշտ ու պարտէզում ճըռ-
վող թռչնականերին և կանաչ ձիւղերից կախուած պտուղները:

ՎԵՐԼՈՒԾԵԼ խօսքեր կողմնակի խնդիրներն իրենց խնդրա-
ռուի հետ միասին իբրև մի ամբողջութիւն վերցնելով, օրինակ՝

Ա. Գիշատիչ բազէն էր սուր ձանկերով բռնեց խեղձուկ աղանուն:

Գիշատիչ բազէն ենթակայ.

Իր սուր ձանկերով խնդիր:

Բռնեց բայ.

Խեղձուկ աղանուն խնդիր:

Բ. Մեր Տիգրանը շատ ջանասէր է:

Մեր Տիգրանը ենթակայ.

Շատ ջանասէր ստորագրեալ.

է բայ:

ԿՈՉԱԿԱՆ ԲԱՌԵՐ

Կոչական ասում են այն բառերը, որոնցով առար-
կաների, գլխաւորապէս մարդկանց անունը տալով կանչում
ենք, երբ ուզում ենք նրանց մի բան ասել հարցնել: Օրի-
նակ՝ կո՛ւժ, քեզ ասեմ, կո՛ւլայ, դու լսի՛ր: Միայն գրա-
գէտ դուք պարոններ, նախանձում եմ ձեր բախտին:

ՈՒՂԱԳՐՈՒԹԻՒՆ:—Կոչական անունների շեշտուած վան-
կի վրայ սովորաբար շեշտ է դրւում:

Կոչական անունները խօսքից բաժանւում են ստորա-
կէտով. ուրեմն եթէ խօսքի սկզբում են ընկնում, ետևից
առնում են ստրակէտ. եթէ խօսքի մէջ են մտնում, եր-
կու կողմից ստորակէտերի մէջ են դրւում. իսկ եթէ խօս-
քի վերջն են գալիս, առաջից դրւում է ստորակէտ, իսկ
հետևից որևէ կէտ՝ նայելով իմաստին:

ԱՍԱՑՈՒԱԾ

Եթէ խօսքն առանձին վերցրած՝ մի ամբողջացած,
լրացած միտք է յայտնում, կոչւում է ասացուած:
Օրինակ՝ մի ծաղկով զարուն չի գալ մի խօսք է և
մի ասացուած: Ասացուած կարող է լինել կամ մի
խօսքը, կամ երկու և աւելի խօսքերի բաղադրութիւնը,
երբ միասին մի ամբողջացած միտք ենք յայտնում: Օրի-
նակ՝ Մի՛նչեւ Շուշանը զարդարուի, ժամը կարճակուի:
Մենք խօսում ենք ասացուածներով, այսինքն ամբողջա-
ցած, լրացած մտքեր ենք յայտնում:

Ասացուածը պարզ է, երբ մի խօսքից է կազմուած:
ասացուածը բարդ կամ բաղադրեալ է, երբ երկու և ա-
ւելի խօսքից է կազմուած:

Ամեն ասացուածից յետոյ դրւում է վերջակէտ, իսկ
ասացուածների մաս կազմող խօսքերն իրարուց բաժան-
ւում սովորաբար ստորակէտով:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹԻՒՆ:—Վերլուծել մի ասացուած նշանակում է
որոշել ասացուածի մասերը, այսինքն թէ ասացուածի մէջ քանի
խօսք կայ: Խօսքն իմացւում է բայից. քանի բայ կայ ասացուածի մէջ,

այնքան էլ խօսք կայ: Ասացուածի մասերը որոշելու համար ուրեմն պէտք է որոշել բայերը: Օրինակ՝

Ա. Ամեն ամպելիս ծիւն չի գալ: Մի պարզ ասացուած, կազմուած մի խօսքից: բայ՝ չի գալ:

Բ. Մինչեւ աղն եկաւ, մատաղը մէջտեղից վերացաւ: Մի բարդ ասացուած կազմուած երկու խօսքից:

1-ին խօսք. Մինչեւ աղն եկաւ. բայ՝ կեաւ:

2-րդ խօսք. Մատաղը մէջտեղից վերացաւ. բայ՝ վերացաւ:

Գ. Ով որ ուսում առնել էր ուզում, պէտք է գնար քաղաք, որ մեր գիւղից հեռու չէր: Մի բարդ ասացուած, կազմուած երեք խօսքից:

1-ին խօսք. Ով որ ուսում առնել էր ուզում. բայ՝ ուզում էր:

2-րդ խօսք. Պէտք է գնար քաղաք. բայ՝ պէտք է գնար:

3-րդ խօսք. Որ մեր գիւղից հեռու չէր. բայ՝ չէր:

ԵՐՐՈՐԴ ՀԱՏՈՒԱԾ

ԲԱՌԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

1. ԱնՈՒՆ

Անունն ասուում են այն բառերը, որոնք տրւում են առարկաներին. օրինակ՝ Արտաշէս, Թագաւոր:

Անունները լինում են՝ յատուկ անուն և հասարակ անուն:

Անունն թիւը երկու է՝ եզակի և յոգնակի:

ԱՆՈՒՄՆ ՀՈՂՈՎՈՒՄԸ

Անունները հայելով թէ խօսքի մէջ ինչպիսի պաշտօն ունին՝ զանազան ձևերով փոփոխւում են: Օրինակ՝

Ես գնացի պարտէզ:

Պարտէզի դուռը բաց էր:

Ես դուրս եկայ պարտէզից:

Ես անցայ պարտէզով:

Պարտէզում շատ ծառեր կային:

Մի անուն հորովել նշանակում է ասել այն բոլոր ձևերը կամ փոփոխութիւնները, որ կարող է ունենալ անունը:

Հոլովները հինգ են, այսինքն ամեն անուն կա-

բող է փոփոխուել հինգ ձևով, որ կոչւում են՝ ուղղական, տրական, բացառական, գործիական, ներքոյական:

Ուղղական հոլովը անուան ուղիղ, անփոփոխ ձևն է և հունի առանձին վերջաւորութիւն: Միւս հոլովները կազմուում են վերջաւորութիւններով, որոնցից առաջ ի, ու ձայնաւորները սովորաբար (երբեմն նաև է ձայնաւորը, եւ, եայ, եոյ երկբարբառները) ձայնափոխութիւն են կրում:

Բացառական հոլովի վերջաւորութիւնն է ից կամ ուց, օրինակ՝ ջուր, ջրից. այգի, այգուց: Ջրերից, այգիներից:

Գործիական հոլովի վերջաւորութիւնն է ու. օրինակ՝ ջրով, այգով կամ այգիով: Ջրերով, այգիներով:

Ներքոյական հոլովի վերջաւորութիւնն է ում. օրինակ՝ ջրում, այգում կամ այգիում: Ջրերում, այգիներում:

Տրական հոլովը լոգնակիւում ունի միայն ի, ջրերի, այգիների. իսկ եզակիւում եօթը տեսակ կազմութիւն ունի, որով և հայերէնում եօթը հոլովում կայ:

1. Ի ՀՈՒՈՎՈՒՄ

Եզակի		Յոգնակի		
Ուղ.	բաղաք	ջուր	բաղաքներ	ջրեր
Տր.	բաղաքի	ջրի	բաղաքների	ջրերի
Բաց.	բաղաքից	ջրից	բաղաքներից	ջրերից
Գործ.	բաղաքով	ջրով	բաղաքներով	ջրերով
Ներք.	բաղաքում	ջրում	բաղաքներում	ջրերում

Այսպէս հոլովուում են անունների մեծ մասը: Միւս

հոլովութիւնների տակ գնացող անուններն ևս մեծ մասամբ կարող են այս հոլովման ձևով ևս հոլովուել:

Հոլովել՝ Դաշտ գիւղ, սար, աչք:—Փողոց, ըռպէ, աշխարհ:—Միս, գիրք, թուղթ, սուրբ:—Ամիս, երկիր:—Անասուն, կերակուր:

2. ՈՒ ՀՈՒՈՎՈՒՄ

Եզակի

Յոգնակի

Ուղ.	Ոսկի	ձի	Ոսկիներ	ձիեր	կն.
Տր.	Ոսկու	ձիու		(ի հոլովման պէս)	
Բաց.	Ոսկուց	ձիուց			
Գործ.	Ոսկով	ձիով			
Ներք.	Ոսկում	ձիում			

Հոլովել՝ Այգի, եկեղեցի, գինի, գօտի:—Մարդ, Աստուած (Աստուծու), սէր (սիրու):

3. ԱՍ ՀՈՒՈՎՈՒՄ

Եզակի

Յոգնակի

Ուղ.	դուռ(ն)	սրբութիւն	դռներ, սրբութիւններ
Տր.	դռան	սրբութեան	(ի հոլովման պէս)
Բաց.	դռնից	սրբութիւնից	
Գործ.	դռնով	սրբութիւնով	
Ներք.	դռնում	սրբութիւնում	

Հոլովել 1. (ղոտն բառի պէս) բուռ, նուռ, կուռ, ձուռ, մուռ, գառ, եղ, թուռ, լեռ:

2. Ուսում (ուսման, ուսումից, ուսումով), հարցում, ցնցում, բորբոքում, Համբարձում:

3. (Սրբութիւն բառի պէս) լաւութիւն, մեծութիւն, ծուլութիւն,—աբիւն, անկիւն սիւն: Այս բառերի գործիականը լինում է նաև՝ սրբութեամբ, լաւութեամբ մեծութեամբ և այլն:

4. Շուն, տուն (շան, տան):

5. Գարուն (գարնան), աշուն:

6. Աղջիկ (աղջկան կամ աղջկայ), կնիկ:

4. ՈՒՆՆ ՀՈՂՈՎՈՒՄ

Եղակի	Յոգնակի
Ուղ.	օր
Տր.	օրուան կամ օրուայ
Բաց.	օրուանից
Գործ.	օրով
Ներք.	օրում

Հոլովել՝ ժամ, ժամանակ, շաբաթ, ամիս, տարի, առաւօտ, երեկ վաղը, ամառ, ձմեռ ևլն,—ժամանակի անուններն մեծ մասը:

5. ՈՒ ՀՈՂՈՎՈՒՄ

Եղակի	Յոգնակի
Ուղ.	տէր
Տր.	տիրոջ
Բաց.	տիրոջից
Գործ.	տիրոջով
Ներք.	—

Հոլովել՝ Տանուտէր, հողատէր, զրամատէր,—կին

(կնոջ),—յոգնակին լինում՝ կանայք, կանանց, կանանցից, կանանցով, կանանցում,—տիկին,—քոյր (քրոջ), մօրաքոյր, հօրաքոյր,—սկեսուր, աներ, տալ, ընկեր:

6. ՕՐ ՀՈՂՈՎՈՒՄ

Եղակի	Յոգնակի
Ուղ.	հայր
Տր.	հօր
Բաց.	հօրից
Գործ.	հօրով
Ներք.	—

Հոլովել՝ կնքահայր, վանահայր,—մայր, տիրամայր՝ սանամայր (սանամէր),—եղբայր, հօրեղբայր:

7. Յ ՀՈՂՈՎՈՒՄ

Եղակի	Յոգնակի
Ուղ.	խաչոյենք
Տր.	խաչոյենց
Բաց.	խաչոյենցից
Գործ.	խաչոյենցով
Ներք.	—

Հոլովել միայն յոգնակի՝

1. Տիրանենք, տէրտէրենք, վարժապետենք:
2. Խնամոնք, պապոնք,—խմոնք, մերոնք, ձերոնք:
3. Հէրանք (հայր, հէր բառից), աներանք, վարդանանք:
4. Ոմն բառի յոգնակին՝ ոմանք, ոմանց ևլն:
5. Մարդ բառի յոգնակին՝ մարդիկ, մարդկանց ևլն:
6. Կին բառի յոգնակին՝ կանայք, կանանց ևլն:

ՈՒՐԻՇ ՀՈՂՈՎԱԿԱՆ ՁԵՒԵՐ

Բացի եօթը հոլովական ձևերից կան և հետևեալ վերջաւորութիւնները, որոնք որոշ դէպքերում և որոշ բառերի համար են միայն գործածւում և մեծ մասամբ հնացած են:

1. Եզակի տրականի համար՝ *այ, ոյ, (անձայն յ-ով)* եան վերջաւորութիւնները. օրինակ՝ Աստուածածնայ (տօն պաս), Սեանայ (լիճ), Վանայ (ծով),—Նիկիա, Նիկիոյ (սուրբ ժողով). Անգլիա, Անգլիոյ,—Աստուած, Աստուծոյ. սէր, սիրոյ. լոյս, լուսոյ:—Ծննդեան (տօն), Հոգեգալուստ, Հոգեգալստեան. Ժողովուրդ, Ժողովրդեան:—Կայսր, խաթր, դուստր բառերն ունին նաև *կայսեր, խաթեր, դստեր* ձևը:

2. Եզակի բացառականի համար՝ *է, օրինակ՝ դուն է դուռ, ծայրէ ծայր, գլխէ գլուխ, երկրէ երկիր* ևն: Գրաբարի ձևեր են՝ *ի ծնէ, ի սրտէ, ի վերջոյ, վերջ ի վերջոյ, կարճ ի կարճոյ*:

3. Եզակի գործիականի համար՝ *ամը (եամը), աւ, իւ, օրինակ՝ մասամբ, անձամբ, կանխաւ, լրիւ, մեղմիւ*:

4. Յոգնակի ուղղականի համար՝ *ք, (ունք, ինք)*. օրինակ՝ *այգիք, որդիք, քաղաքացիք, տղայք, ծաղկունք, դիւցազունք, անձինք*:

5. Յոգնակի տրականի համար՝ *աց, ից, ոց, (ուց), անց*. օրինակ՝ *ռուսաց, տաճկաց, օրիորդաց,—պարսից, Կասպից (ծով), հայոց, տղայոց, երեխայոց, քաղաքացոց,—անձանց, մանկանց, ծաղկանց, դիւցազանց*:

ԱՆՈՒՆՆԵՐԻ ՅՕԴՈՎ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ

Յօդ ասւում են *ըս, ըղ, ըն* կամ *ը* (ձայնաւորի

վրայ *ս, ղ, ն*), բառերը, որոնք մենակ չեն գործածւում, այլ միշտ գրւում են մի անուան վրայ վերջից, որի հետ և միացած են գրւում: Օրինակ՝ *գիրքըս, գիրքըղ, գիրքըն* կամ *գիրքը* (սովորական գրութեամբ *գիրքս, գիրքը, գիրքն* կամ *գիրքը*),—*գօտիս, գօտիղ, գօտին*:—Յօդերից առաջ անձայն յ-ն գուրս է ընկնում. *ինչպէս՝ տղայ, տղաս, տղադ, տղան*:

Յօդերը դրուելով անուան վրայ՝ լրացնում են նրա իմաստը վրան աւելացնելով իրենց նշանակութիւնները, որ են՝

1. *Ս (ըս)=իմ, մեր,—այս,—ես, մենք*:

2. *Դ (ըղ)=քո, ձեր,—այդ,—դու, դուք*:

3. *Ն (ըն), ը=իր, նրա, իրենց, նրանց,—այն*. կամ թէ անուան ընդհանուր անորոշ իմաստը որոշում է, այսինքն մասնաւորում է՝ ցոյց տալով խօսողին ծանօթ, յայտնի առարկայ: Օրինակ՝ *նա զիրք կարգաց*. (անորոշ է մեռած, թէ ինչ գիրք): *Նա զիրքը կարգաց* (ծանօթ, յայտնի գիրքը): *Նա գիրքս կարգաց* (=իմ գիրքը): *Գիրքըս ես չեմ քնել* (=այս գիրքը): *Մեղաւորս չիմացայ՝ ինչ անեմ* (=ես մեղաւոր, ես որ մեղաւոր էի):

ՎԵՐԼՈՒԾՈՒԹԻՒՆ:—Որոշել անուններն և նրանց թիւն ու հոլովը՝ բառերի տակը գիծ քաշելով և գլխին գրելով *ե. ու.* (եզակի ուղղական), *յ. ու.* (յոգնակի ուղղական), *ե. տ.* (եզակի տրական), *յ. տ.* (յոգնակի տրական) ևն: Օրինակ՝

Մեր գիւղը (ե. ն.) ուսումնարան (ե. ու.) չկար: Ով որ ուսում (ե. ու.) առնել էր ուղում, պէտք է զնար քաղար (ե. ու.) որ մեր գիւղիցը (ե. բ.) հեռու չէր:

2. Դ Ե Ր Ա Ն Ո Ւ Ն

Դ եր անուն ասւում են այն բառերը, որոնք գրւում են անունների տեղ մի անգամ արդէն ասած, կամ յայտնի ծանօթ անունները չկրկնելու համար:

Դերանունները հաստատուն նշանակութիւն չունին. այլ նայելով ինչ անուան տեղ են դրւում, նրա նշանակութիւնն էլ ստանում են: Օրինակ՝ Տիգրանը պարապում է. նա դեռ չի պատրաստել իւր դասերը. խօսքի մէջ նա, իւր բառերը դերանուն են և դրուել են Տիգրան անուան տեղ: Բայց եթէ ասենք՝ Արտաշէսը պարապում է. նա դեռ չի պատրաստել իւր դասերը, — նա, իւր դերանուններն այժմ դրւում են Արտաշէս անուան տեղ:

Դերանունները լինում են՝ անձնական, ցուցական, փոխադարձ և յարաբերական:

Անձնական դերանուններն են՝ 1-ին դէմքի ես, ինքս. 2-րդ դէմքի՝ դու, ինքդ. 3-րդ դէմքի՝ ինքը (ինքն):

Երրորդ դէմքի առարկայի անուան տեղ դրւում են նոյնպէս և

Ցուցական դերանունները՝ սա, դա, նա, այս, այդ, այն, որոնք գործ են ածւում, երբ խօսողն առարկան ցոյց է տալիս և առարկայի անունը տալու տեղ ասում է՝ սա, դա, նա և ինչ: Երբ առարկան առաջին դէմքին մօտ է, կամ մօտ է մտածւում, դրւում է սա, այս. երբ երկրորդ դէմքին մօտ է, կամ մօտ է մտածւում, դրւում է դա, այդ. իսկ երբ առարկան առաջին և երկրորդ դէմքից էլ հեռու է, կամ հեռու մտածւում, դրւում է նա, այն:

Փոխադարձ դերանուններն են՝ միմեանց, իրար, մէկմէկու, որոնք դրւում են խօսքի մէջ երաժ երկու կամ աւելի անունների տեղ և խօսքի իմաստն այնպէս արտայայտում, որ թէ մէկ և թէ միւս առարկայի համար է հասկացւում: Օրինակ՝ կաղն ու կոյրն իրար օգնեցին խօսքը հասկացւում է՝ թէ կաղը կոյրին օգնեց և թէ կոյրը կաղին օգնեց:

Յարաբերական կամ շաղկապական դերա-

նուններն են՝ որ, ով, ինչ, ուր, երբ, որոնք դրւելով մի խօսքի սկզբում՝ այդ խօսքը կապում են մի ուրիշ խօսքի հետ: Օրինակ՝ Ուսում առնելու համար պէտք էր գնալ քաղաք, որ (=քաղաքը) մեր գիւղիցը հեռու չէր: — Մենք մտանք եկեղեցին, ուր (=եկեղեցում) մեծ բազմութիւն կար:

Ո՞վ, ի՞նչ, ո՞ւր, ե՞րբ հարցական դերանուն են կոչւում և հարցական նշանով են գրւում, երբ գործ են ածւում ոչ թէ մի ծանօթ անուն չկրկնելու համար, այլ խօսողի համար մի անծանօթ անուն հարցնելու համար, որ որոշւում է պատասխանի մէջ: Օրինակ՝ Ո՞վ եկաւ ձեզ մօտ: — Տիգրանը եկաւ մեզ մօտ:

ԴԵՐԱՆՈՒԱՆ ԹԻԻԼ

Դերանունան թիւը կախուած է այն անունից, որի տեղ դրւում է: Եզակի անուան տեղ դրւում է եզակի դերանուն, իսկ յոգնակի անուան, ինչպէս և երկու և աւելի անունների տեղ՝ դրւում է յոգնակի դերանուն: Օրինակ՝ Աշակերտը պարապում է. նա դեռ չի պատրաստել իր դասերը: — Աշակերտները պարապում են. նրանք դեռ չեն պատրաստել իրենց դասերը: Տիգրանն ու Վարդանը չեն պատրաստել իրենց դասերը: Բայց՝ Աշակերտները, որ (կամ որոնք) պատրաստել էին իրենց դասերը, գնացին դրօսնելու: Տիգրանն ու Վարդանը որ (կամ որոնք) արդէն պատրաստել էին... Ո՞ւր են այն Գրքերը, որ (և ոչ՝ որոնք, որոնց) դու կարդացել ես: Տուր ինձ այն թուղթն ու մատիտը, որ (և ոչ՝ որոնք, որոնց) դու գնեցիր ինձ համար:

ԴԵՐԱՆՈՒԱՆ ՀՈՂՈՎՈՒՄԸ

Դերանունները հոլովուում են մասամբ անունների պէս, մասամբ առանձին կերպով:

Անունների պէս հոլովուում են՝ միմեանց, միմեանցից, միմեանցով: Իրար կամ իրարու, իրարուց, իրարով, — մէկ-մէկու, մէկմէկուց: Ի՞նչ, ինչի՞, ինչից, ինչո՞վ, ինչո՞ւմ, — ինչէ՞ր, — Ի՞նչ, երբու՞նի, երբու՞նից: Որ, որի, որից, որով, — որո՞նք, կամ որ, որոնց, որոնցից, որոնցով:

Ինքս, ինքդ, գրական լեզուի մէջ նաև՝ այս, այդ, այն չեն հոլովուում: Յոգնակի ունին՝ ինքներս, ինքներդ:

Առանձին կերպով հոլովուում են՝ ես, դու, ինքը, սա, դա, նա, ով, որոնք (բացի ով բառից) ունին և մի առանձին հոլով՝ որ կոչուում է սեռակալ:

Եզակի

Ո.	Ես	դու	նա	ինքը	ով
Ս.	իմ	քո	նրա	իր(իւր)	ում
Տ.	ինձ	քեզ	նրան	իրան	ում
Բ.	ինձնից	քեզնից	նրանից	իրանից	ումնից
Վ.	ինձնով	քեզնով	նրանով	իրանով	ումնով
Ն.	ինձնում	քեզնում	նրանում	իրանում	ումնում

Յոգնակի

Ո.	մենք	դուք	նրանք	իրանք	ովքեր
Ս.	մեր	ձեր	նրանց	իրանց	—
Տ.	մեզ	ձեզ	նրանց	իրանց	—
Բ.	մեզնից	ձեզնից	նրանցից	իրանցից	—
Վ.	մեզնով	ձեզնով	նրանցով	իրանցով	—
Ն.	մեզնում	ձեզնում	նրանցում	իրանցում	—

Դերանունների հոլովման համար պիտի իմանալ.

1. Նա, դու բացառ. գործ. և ներք. հոլովների համար ունին նաև ինձանից, քեզանից, մեզանից, ձեզանից, — ինձանով, քեզանով, մեզանով, ձեզանով, — ինձանում, քեզանում, մեզանում, ձեզանում ձևերը:

2. Ինքն հոլովում է և և ձայնաւորով՝ իրեն, իրենից, ևն. իրենք, իրենց ևն: Յոգնակին կա՛յ նաև՝ իւրեանք, իւրեանց, որ հնացած է:

3. Նա ունի նաև նորա, նորան, նորանից ևն. նոքա, նոցա, նոցանից ևն ձևերը, որ հնացած են:

Նա դերանունան պէս հոլովուում սա, դա, — սա, սրան, սրանից, սրանով, սրանում, սրանք, սրանց ևն. դա, դրան, դրանից, դրանով ևն:

4. Սեռական հոլովները՝ իմ, քո, մեր, ձեր, իր (իւր), սրա, դրա, նրա, գրւում են միայն անունների վրայ իբրև լրացում և ցոյց են տալիս, թէ մի առարկայ ում է պատկանում. օրինակ՝ իմ գիրքը, քո գիրքը, մեր գիրքը, նրա գիրքը ևն: Անուններն ու միւս դերանունները չունին գիրքը ևն: Անուններն ու միւս դերանունները չունին այս հոլովը. դրա պաշտօնը կատարում է տրական հոլովը, որ միաժամանակ և սեռական է: Այս դէպքում անունները գրական լեզուի մէջ չեն ընդունում. օրինակ՝ իրենց գիրքը, նրանց գիրքը, Տիգրանի գիրքը, աշակերտի գիրքը:

Ուղղագրութիւն Դերանունների վերջում ա, ո ձայնաւորներից յետոյ անձայն յ չի գրւում՝ սա, դա, նա, սրա, դրա, նրա, քո:

Վերլուծութիւն:—Որոշել դերանունները, նրանց տեսակները, թիւն ու հոլովը: Օրինակ՝ իշուկը մէկ սոխակ տեսակ, «մէկ ինձ» (ա. ե. տ. = անհատական, եզակի տրական) նայիր, նրան (ց. ե. տ.) ասաց, — ասում են դու (ա. ե. ու.) լաւ ես երգում, բայց չգիտեմ՝ ճիշտ են ասում: Ես (ա. ե. ու.) ականջներ ունիմ լայն լայն, լաւ եմ լսում ամեն մի ձայն. բայց քո (ա. ե. ս.) ձայնը գեղ չեմ լսած:

3. Ա Ծ Ա Կ Ա Ն.

Ածական կոչւում են այն բառերը, որոնք ցոյց են տալիս այնպիսի գաղափարներ, որ անկախ գոյութիւն չունին, կամ իբրեւ անկախ բան չեն մտածւում, այլ միշտ կախուած կամ կապուած որեւէ ուրիշ գաղափարից: Օրինակ՝ սպիտակ, լաւ, շատ բառերի ցոյց տուած գաղափարները կախուած են միշտ որեւէ ուրիշ բանից, ինչպէս՝ սպիտակ ծիւն, սպիտակ ներկ, սպիտակ ներկել, լաւ մարդ, լաւ խօսել ևլն:

Ածականների ցոյց տուած գաղափարները նայելով խօսքի մէջ կատարած պաշտօնին՝ մտածւում են անուան, բայիմաստի և ածականի հետ կապուած. ուստի և ածականները լինում են՝ ածական անուն կամ մականուն, մակբայ և մակածական:

Ածական անուն կամ մականուն ասւում են ածականները, երբ դրուելով անուան վրայ՝ որոշում, լրացնում են անուան իմաստը: Օրինակ՝ կլոր սեղան, փայտէ սեղան, սեւ սեղան, երկու սեղան կապակցութիւնների մէջ կլոր, փայտէ, սեւ, երկու բառերը որոշում են սեղանի ծնւթ, նիւթը, որից շինուած է զոյնը, թիւը:

Մակբայ ասւում են ածականները, երբ դրուելով բայերի վրայ՝ լրացնում են բայիմաստը: Օրինակ՝ նա լաւ խօսեց խօսքի մէջ լաւ ածականը որոշում է, թէ ինչպէս խօսեց:

Մակածական ասւում են ածականները, երբ դրուելով մի ուրիշ ածականի՝ մականուան, կամ մակբայի վրայ որոշում են ածականի իմաստը, օրինակ՝ այս վարդը խիստ հոտաւետ է խօսքի մէջ խիստ բառը դրուելով հոտաւետ ածականի վրայ՝ սաստկացնում է նրա իմաստը:

Ածականները՝ մականուն, մակբայ, մակածական խօսքի մէջ միշտ անսկզբութիւն են ցնում: Մականունները սակայն կարող են գոյականաբար գործածուել և յօդ ընդունելով հոլովուել ինչպէս անունները. բայց այդ ժամանակ այլ ևս ածական անուն չեն, այլ գոյական անուն: Օրինակ՝ ցուրտ, աղքատ, պառաւ, ծեր կարող են նշանակել՝ ցրտով, աղքատ մարդ կամ միւրացկան, պառաւ կին, ծեր մարդ:—Միւրիւր քարին, գեղեցիկն ու ճշմարիտը նշանակում է բարի բանը, գեղեցիկ, ճշմարիտ բանը:

ՎԵՐԼՈՒԹՈՒԹԻՒՆ.—Որոշել ածականները և նրանց գործածութիւնն իբրեւ մականուն, մակբայ, մակածական: Օրինակ՝ Շատ հին ժամանակ մի թագաւոր կար:—Շատ մակածական հին ածականի, շատ հին:—Հին մականուն ժամանակ անուան, հին ժամանակ: Մի մականուն թագաւոր անուան, մի թագաւոր:—Պառաւ ծերին սաստիկ նախատեց:—Սաստիկ մակբայ, նախատեց բայի, սաստիկ նախատեց:

ԱԾԱԿԱՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Ածականները նայելով իրենց իմաստին լինում են՝ որակական, բանական, դասական, ցուցական, անորոշ և հարցական:

Որակական ածականները ցոյց են տալիս յատկութիւն կամ ինչպիսի լինելը: Օրինակ՝ քարի հայր, մեծ գեղք, կապոյտ ներկ:

Բանական ածականները ցոյց են տալիս քանի կամ որքան լինելը: Օրինակ՝ մի զրեւ, երկու սեղան, կէս տարի, քառորդ դար:

Դասական ածականները ցոյց են տալիս, թէ որոշ շարքի մէջ քանիերորդ կամ որ տեղն է բռնում առարկան: Օրինակ՝ առաջին տարի, երկրորդ սեղան, երրորդ դասարան, չորրորդ աշակերտ ևլն:

Քանակական և դասական ածականները մի ընդհանուր անունով կոչւում են թուական անուն:

Ցուցական ածականները՝ այս, այդ, այն, սոյն, դոյն, նոյն, միեւնոյն գործ են ածւում միայն իբրև մականուն. դրուելով մի անուն վրայ որոշում են անունը՝ վրան աւելացնելով մատով ցոյց տալու կամ մըտքով ակնարկելու գաղափար: Օրինակ՝ երբ ասում ենք այս սեղանը, այդ սեղանը, ձեռով ցոյց ենք տալի մի սեղան:

Ցուցական ածականները՝ այս, այդ, այն, չպիտի շփոթել այս, այդ, այն, դերանունների հետ: Դերանունները միշտ մենակ են բանում դրուելով մի անուն (երեւմտ և խօսքի տեղ), որից և ստանում են իրենց իմաստը. իսկ ածականները մենակ չեն բանում, այլ միշտ մի անուն վրայ են դրւում:

Ցուցական ածականների մէջ դրւում են նաև հետևեալները՝ այսպէս, այդպէս, այնպէս, սոյնպէս, դոյնպէս, նոյնպէս. այսպիսի, այդպիսի, այնպիսի, սոյնպիսի. այսքան, այդքան, այնքան, սոյնքան. այսչափ, այդչափ, այնչափ, սոյնչափ:

Անորոշ ածականներն են՝ շատ, քաւական(ի), քիչ, ուղիւս, աւելի, պակաս, նուազ, ամեն, ամենայն, քոլոր, իւրաքանչիւր, ամեն մի, այլ, ուրիշ, միւս, մէկէլ, այս ինչ, այն ինչ, ինչինչ, ինչոր, որեւէ, մի քանի:

Հարցական ածականներն իմաստով անորոշ ածական են, միայն գործ են ածւում խօսքի մէջ մի ածականի հարցման համար: Պատասխանը լինում է մի ածական: Հարցական ածականներն են՝ ինչ, ո՞ր, քանի, ո՞րքան, ինչքան, ո՞րչափ, ինչչափ, ո՞րպէս, ինչպէս, ո՞րպիսի, ինչպիսի, քանիքորդ:

Ածականների մէջ մտնում են նաև ս, ու, ն, (ը) յօդերը, որոնք մականուն են:

4. Բ Ա Յ

Բայ կոչւում են ան բառերը, որոնք մենակ խօսք են կազմում:

Ամեն բայ ունի՝ բայիմաստ, դէմք, թիւ, ժամանակ և եղանակ:

Բայի մաստը ցոյց է տալիս եղելութիւն այսինքն անել, լինել, մի բան անել, մի բան լինել:

Դէմքը երեք է՝ 1-ին դէմք, 2-րդ դէմք, և 3-րդ դէմք:

Թիւը երկու է՝ եզակի և յոգնակի:

ԲԱՅԻ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ

Ամեն բայ ցոյց է տալիս և ժամանակ, այսինքն թէ երբ է կատարւում եղելութիւնը: Ժամանակը երեք է.

1. Ներկայ, որ ցոյց է տալիս խօսելու վայրկեանին կատարող եղելութիւն, օրինակ՝ գնում եմ:

2. Անցեալ, որ ցոյց է տալիս խօսելու վայրկեանից առաջ կատարուած եղելութիւն, օրինակ՝ գնացել եմ:

3. Ապագայ, որ ցոյց է տալիս խօսելու վայրկեանից յետոյ կատարուելիք գործողութիւն, օրինակ՝ գնալու եմ:

ԲԱՅԻ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Բայի եղանակները հինգ են՝ սահմանական, ենթադրական, հարկադրական, ըզձական և հրաժարական:

1. Սահմանական եղանակը ցոյց է տալիս իրական եղելութիւն:

2. Ենթադրական եղանակը ցոյց է տալիս մի եղելութիւն, որ խօսողը մտածում, ենթադրում է, թէ լինում է, եղել է, կամ կը լինի:

3. Հարկադրական եղանակը ցոյց է տալիս մի եղելութիւն, որ խօսողը մտածում է, բայց ոչ իբրև լոկ ենթադրութիւն, այլ իբրև անհրաժեշտութիւն, անհրա-

ժեշտ հարկ ու պէտք, պարտք: Օրինակ՝ նա այժմ տանն է: Նա այժմ գնում է խօսքերի մէջ է, գնում է բայերը սահմանական եղանակի են. նրանց ցոյց տուած եղելութիւններն իրական են, իսկապէս տեղի ունին. իսկ եթէ նոյն խօսքերը շուռ տանք և ասենք՝ նա այժմ տանը կը լինի: Նա այժմ գնալիս կը լինի,—կը լինի, գնալիս կը լինի բայերը ենթադրական եղանակի են. մենք այդպէս կարծում, ենթադրում ենք միայն: Իսկ երբ ասում ենք՝ նա այժմ տանը պիտի լինի, նա այժմ գնալիս պիտի լինի, այդ նշանակում է, որ նա ստիպուած է, պարտաւոր է, կամ մենք անհրաժեշտօրէն այդպէս ենք դատում, որ տանը լինի, գնալիս լինի:

4. Ըղձական եղանակը ցոյց է տալիս մի եղելութիւն, որ ցանկացում է. օրինակ՝ գնամ, տեսնեմ նրան: Աստուած հոգին լուսատրէ:

Ըղձական եղանակը կոչում է նաև ստորագասական եղանակ:

5. Հրամայական եղանակը ցոյց է տալիս մի եղելութիւն, որ խօսողն իւր խօսակցին հրամայում է. ունի միայն եզակի և յոգնակի 2-րդ դէմք: Օրինակ՝ կարգա՛, գրի՛ր,—կարգացէ՛ք գրեցէ՛ք:

ԲԱՅԻ ԽՈՆԱՐՀՈՒՄԸ

Մի բայ խոնարհել նշանակում է ասել այն բոլոր ձևերը կամ փոփոխութիւնները, որ ստանում է բայը՝ դէմք, թիւ, ժամանակ և եղանակ ցոյց տալու համար: Բայի ձևերը կամ ժամանակները նայելով իրենց կազմութեան՝ չորս խմբի են բաժանուում՝ գլխաւոր բաղադրեալ ժամանակներ, լծորդի ձևեր, բնի ձևեր և երկրորդական բաղադրեալ ժամանակներ: Նաև և անկանոն խոնարհող բայեր:

ԳԼԽԱՒՈՐ ԲԱՂԱԴՐԵԱԼ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ

Գլխաւոր բաղադրեալ ժամանակները կազմում են մի դերբայից և եւմ բայից, որ ասում է օժանդակ բայ:

Դերբայ. ասում են բայի այնպիսի ձևերը, որոնք ցոյց են տալիս բայիմաստ (անել, լինել) առանց դէմքի, ուստի կոչւում են նաև բայի անդէմ ձևեր:

Բուն բայերն են բայի գլխաւոր ձևերը:

Դերբայները հինգ են՝ անորոշ, անկատար, ապառնի, անցեալ և ենթակայական:

ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ

Անորոշ դերբայը ցոյց է տալիս լոկ բայիմաստ (եղելութիւն) առանց դէմք, թիւ, եղանակ և ժամանակ որոշելու:

Վերջանում է միշտ Լ բաղաձայնով, որից առաջ ընկնում է ա, ե, ի ձայնաւորներից մէկը, որոնք կոչւում են լծորդ: Օրինակ՝ խաղալ, գրել, ծաղկիլ: Իլ վերջաւորութեան տեղ սովորաբար գործ է ածւում ել՝ աշխատիլ, խօսիլ, մեռնիլ, յաջողիլ=աշխատել, խօսել, մեռնել, յաջողել:

Ալ, ել, իլ վերջաւորութիւնները դրւում են կամ անմիջապէս բայի հիմքի վրայ, ինչպէս՝ խաղալ, բերել, յաջողիլ. կամ հիմքի և լծորդի մէջ մտնում են ածանցներ, ինչպէս՝ գոհանալ, մօտենալ, տեսնել, փախչիլ:

Բայի հիմքը լինում է կամ մի արմատ, կամ մի բառ՝ լինի պարզ, բարդ թէ ածանցական: Օրինակ՝ կարդալ, խաղալ, կատարել, թագաւորել բայերի հիմքն են՝ կարդ, խաղ, կատար, թագ (պարզ բառ), (բայարմատ), խաղ (պարզ բառ), կատար (բարդ բառ), թագաւոր (ածանցական բառ):

Անորոշ դերբայը քայանունն է և հոլովւում է (գնալ, գնալու, գնալուց գնալով, գնալում) ուստի և բայերի մասին խօսելիս սովորաբար վերցւում է անորոշ դերբայը: Միւս դերբայները քայածական են և գործ են ածւում իբրև մականուն կամ մակբայ:

ԱՆԿԱՏԱՐ ԴԵՐԲԱՅ

Անկատար դերբայը բայական իմաստի հետ ցոյց է տալիս եղելութեան մէջ լինելը կամ մի կատարուող եղելութիւն, որ դեռ չի վերջացել, տեղում է յարաձիգ: Վերջաւորութիւնն է ում և իս (սովորաբար ասւում է լիս): Օրինակ՝ խաղում, գրում, խօսում, — խաղալիս, գրելիս, խօսելիս:

Ում վերջաւորութեամբ Անկատար դերբայը դրուելով եւմ բայի Սահմանական ներկայ և անցեալ ժամանակների հետ՝ կազմում է բայերի Սահմանական 1, անկատար կամ բուն ներկայ և 2, անկատար անցեալ ժամանակներ: Առաջինը ցոյց է տալիս ներկայում կատարուող տեական եղելութիւն, իսկ երկրորդը՝ անցեալում կատարուող տեական եղելութիւն: Օրինակ՝

Սահմանական

Ներկայ

գնում եմ
գնում ես
գնում է
գնում ենք
գնում էք
գնում են

Անկատար անցեալ

գնում էի
գնում էիր
գնում էր
գնում էինք
գնում էիք
գնում էին

Այսպէս խոնարհւում են բոլոր բայերը, բացի գալ, տալ, լալ, որոնց համար վերցւում է լիս վերջաւորութեամբ անկատար դերբայը՝ գալիս եմ, գալիս ես ևն. տալիս եմ, տալիս ես, լալիս եմ, լալիս ես, լալիս է ևն:

ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅ

Ապառնի դերբայը բայիմաստի հետ ցոյց է տալիս և եղելութեան դեռ նոր կատարելի լինելը: Վերջաւորութիւնն է, ու և իք (սովորաբար ասւում է լու, լիք): Օրինակ՝ գնալու, գրելու, խօսելու, — գնալիք, գրելիք, խօսելիք: Ընդ վերջաւորութեամբ ապառնի դերբայը եւմ բայի հետ կազմում է Սահմանական եղանակի, 1, ապառնի ներկայ կամ բուն ապառնի և 2, ապառնի անցեալ ժամանակները: Առաջինը ցոյց է տալիս ներկայի նկատմամբ ապառնի գործողութիւն, իսկ երկրորդը՝ անցեալի նկատմամբ ապառնի գործողութիւն: Օրինակ՝

Սահմանական

Ապառնի

գնալու եմ
գնալու ես
գնալու է
գնալու ենք
գնալու էք
գնալու են

Ապառնի անցեալ

գնալու էի
գնալու էիր
գնալու էր
գնալու էինք
գնալու էիք
գնալու էին

ԱՆՅԵԱԼ ԴԵՐԲԱՅ

Անցեալ դերբայը բայական իմաստի հետ ցոյց է տալիս և եղելութեան կատարուած, վերջացած լինելը: Ունի երկու վերջաւորութիւն, վաղակատար՝ ել, յարակատար՝ ած: Օրինակ՝ գնացել, գնացած. նստել, նստած:

Երկու ձևն ևս եւ բայի հետ կազմում են սահմանական եղանակի 1. վաղակատար ներկայ կամ լոկ վաղակատար և 2. վաղակատար անցեալ. ապա 1, յարակատար ներկայ կամ լոկ յարակատար և 2, յարակատար անցեալ ժամանակներ: Առաջինները ցոյց են տալիս ներկայի նկատմամբ կատարուած եղելութիւն, իսկ երկրորդները՝ անցեալի նկատմամբ կատարուած եղելութիւն: Օրինակ՝

Սահմանական

Վաղակատար

նստել եմ
նստել ես
նստել է
նստել ենք
նստել էք
նստել են

Երակատար

նստած եմ
նստած ես
նստած է
նստած ենք
նստած էք
նստած են

Վաղակատար անցեալ

նստել էի
նստել էիր
նստել էր
նստել էինք
նստել էիք
նստել էին

Երակատար անցեալ

նստած էի
նստած էիր
նստած էր
նստած էինք
նստած էիք
նստած էին

Վաղակատար և յարակատար ժամանակների իմաստի տարբերութիւնը հետեւեալն է. յարակատար ժամանակները յոյց են տալիս մի անցեալ եղելութիւն, որի հետեւանքը իբրեւ ղրութիւն յարատեւում է մինչև խօսողի ներկան կամ մինչև մի անցեալ ժամանակակէտ, մինչդեռ վաղակատար ժամանակները պարզապէս յայտնում ներկայի կամ մի անցեալ ժամանակակէտի նկատմամբ կատարուած եղելութիւն՝ առանց ուշ դարձնելու թէ գործողութեան հետեւանքն իբրեւ ղրութիւն յարատեւում է թէ չէ: Օրինակ՝ Երեխան այսօր քնել է:—Այո, քնել է և այժմ էլ դեռ քնած է: Կան բայեր սակայն, որոնց այս երկու ժամանակներն անխտիր իրար տեղ բանում են:

ԵՆԹԱԿԱՅԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ

Ենթակայական դերբայը բայիմաստի հետ ցոյց է տալիս և անող կամ եղող լինելու գաղափար: Վերջաւորութիւնն է ող: Օրինակ՝ գնացող, կարգացող, խօսող—Ով որ գնում է, գնացել է կամ գնալու է: Նա որ կարգում է, կարգացել է, կարգալու է:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹԻՒՆ:—Որոշել դերբայները և Սահմանական եղանակի գլխաւոր բաղադրեալ ժամանակներն ի նկատի ունենալով որ եւ օժանդակը յաճախ 1. դերբայից առաջ է ընկնում, օրինակ՝ նա հիմա մեղ մօտ է գալու. 2. ուրիշ բառերով բաժանուած է դերբայից, օրինակ՝ ես էլ եւ ձեզ պէս դողում. 3. գեղջում է, այսինքն դուրս է ընկնում. օրինակ՝ Ձիւնն եկել (էր), դիզուել (էր) սար ու ձոր բռնել էր:

ԼԾՈՐԴԻ ՁԵԻՆԵՐ

Լծորդի ձևերն են՝ Ըղձական, ենթադրական և հարկադրական եղանակները:

Ը դ ձ ա կ ա ն եղ ա ն ա կ ն ու ն ի միայն երկու ժամա-
նակ՝ ապառնի և անցեալ: Ապառնին կարող է գործածուել և
իբրև ներկայ: Երկու ժամանակներն ևս կազմուում են ա-
ռանձին վերջաւորութիւններով, որոնք աւելանում են
լծորդ ձայնաւորների վրայ:

Ապառնու մէջ եւ լծորդը փոխւում է եզ. 3-րդ դէմքի
մէջ՝ է կամ ի, և յոգն. 2-րդ դէմքի մէջ՝ է. իսկ անցեալի մէջ եւ
և ի լծորդներն երկուսն ևս դառնում են է: Հետեւեալ օրի-
նակների մէջ կարելի է տեսնել վերջաւորութիւնները
լծորդների հետ միասին, որոնք շղատառով և անջատ են
տպուած:

Ապառնի

Ա լծորդ	Ե լծորդ	Ի լծորդ
կարդ ամ	գր եմ	ծաղկ իմ
կարդ աս	գր ես	ծաղկ իս
կարդ այ	գր է, գր ի	ծաղկ ի
կարդ անք	գր եմք	ծաղկ ինք
կարդ արք	գր էք	ծաղկ իք
կարդ ան	գր են	ծաղկ ին

Անցեալ

կարդ այի	գր էի	ծաղկ էի
կարդ այիք	գր էիք	ծաղկ էիք
կարդ ար	գր էր	ծաղկ էր
կարդ այինք	գր էինք	ծաղկ էինք
կարդ այիք	գր էիք	ծաղկ էիք
կարդ ային	գր էին	ծաղկ էին

Ապառնի ժամանակի մէջ ի լծորդը սովորաբար փոխ-

ւում է եւ լծորդի, բացի եզ. 3-րդ դէմքից. ինչպէս՝ ծաղ-
կիմ, ծաղկիս, ծաղկինք, ծաղկիք, ծաղկին ձևերի տեղ գործ են
ածւում աւելի՝ ծաղկեմ, ծաղկես, ծաղկենք, ծաղկէք, ծաղկեն:

Ը դ ձ ա կ ա ն եղ ա ն ա կ ի պէս խոնարհւում են և մի քանի
բայի Սահմ. ներկայ և անկատ. անցեալ ժամանակները:
Դրանք են:

Կա մ, կաս, կայ, կանք, կաք, կան, — կայի, կայիք, կար,
կայինք, կայիք, կային:

Ե մ, ես, է, ենք, էք, են, — էի, էիք, էր, էինք, էիք,
էին: Այսպէս և Գ ի տ ե մ, գիտես, գիտէ կին: Ար ժ ե մ,
արժես արժէ կին:

Ուն ի մ, ունիս, ունի, ունինք, ունիք, ունին, — ունէի,
ունէիր, ունէր: Այսպէս և խնդրեմ, կարծեմ, կարծես:

Ե ն թ ա դ ը ա կ ա ն և հարկադրա կ ա ն ե-
ղ ա ն ա կ ն եր ն ու ն ի միայն երկու ժամանակ՝ ապառ-
նի և անցեալ: Դրանց ապառնին ևս կարող է գործածուել
իբրև ներկայ:

Ենթադրական և հարկադրական եղանակները կազ-
մւում են ըղձականի վրայ աւելանալով՝ ենթադրականի
համար կը եղանակիչը, իսկ հարկադրականի համար պիտի
եղանակիչը, որի տեղ կարող է դրուել և պէտք է: Օրի-
նակ՝ ենթադրական ապառնի՝ կը կարգամ, կը կարդաս,
կը կարդայ և այլն: Անցեալ՝ կը կարգայի, կը կարդայիր,
կը կարդար և այլն: Հարկադր. ապառնի՝ պիտի կարգամ,
պիտի կարդաս, պիտի կարդայ և այլն: Անցեալ՝ պիտի
կարգայի, պիտի կարդայիր, պիտի կարդար և այլն:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹԻՒՆ.— Որոշել լծորդի ձևերը ի նկատի ունենա-
լով, որ պիտի (պէտք է) եղանակիչը երբեմն ուրիշ բառերով
բաժանւում է խոնարհուող բայիցը օրինակ՝ նա պիտի այսօր մեզ
մօտ գայ:

ԲՆԻ ԶԵԻԵՐ

Բնի ձևերն են՝ Անցեալ կատարեալ և Հրամայական, մասամբ և Անցեալ և Ենթակայական գերբայներ:

Անցեալ կատարեալը սահմանական եղանակի մի անցեալ ժամանակ է, որ ցոյց է տալիս գլխաւորաբար վայրկենապէս անցած կատարուած եղելութիւն, կամ մի գործողութիւն, որ խօսողի ներկայութեամբ է կատարուել: Օրինակ՝ եկալ, տեսայ, չաղթեցի: Նա այս բոլորն զնաց:

Անցեալ կատարեալն ունի երեք տեսակ վերջաւորութիւն՝ 1. ի, 2. ա և 3. խառն ի, եւ ձայնաւորներով. ուստի և կազմուած են երեք խոնարհում: Համապատասխան ձևով կազմուած է և Հրամայական եղանակը:

Վերջաւորութիւններն աւելանում են մեծ մասամբ բայերի հիմքից ածանցուած մի ձևի վրայ, որ կոչւում է բուն: Նել (նիլ) և չել (չիլ) վերջացած բայերը միայն բնի ձև չունեն. դրանց հիմքը ծառայում է և իբրեւ բուն, այսինքն վերջաւորութիւններն աւելանում են հիմքի վրայ:

Հետեւեալ օրինակների մէջ կարելի է տեսնել անցեալ կատարեալի և հրամայականի վերջաւորութիւնները բնի ածանցների հետ, որոնց մէջ գծիկներ են դրուած վերջաւորութիւններն ու ածանցները հիմքից անջատելու համար: Սկզբում դրուած է անորոշ գերբայը:

1. Ի ԽՈՆԱՐՀՈՒՄ

Անորոշ գերբայ	Անց. կատ.	Հրամ.
1. զն-ալ	զն-աց-ի զն-աց-իր զն-աց	զն-ա

զն-աց-ինք

զն-աց-իք

զն-աց-էք

զն-աց-ին

2. զր-ել

զր-եց-ի

զր-եց-իր

զր-է, զր-իր (զր-ի)

զր-եց

զր-եց-ինք

զր-եց-իք

զր-եց-էք, զր-էք

զր-եց-ին

3. մորթ-ոտ-ել

մորթոտ-եց-ի

մորթոտ-եց-իր

մորթոտ-է, մորթոտ-իր

մորթոտ-եց

մորթոտ-եց-ինք

մորթոտ-եց-իք

մորթոտ-եց-էք, մորթոտ-էք

մորթոտ-եց-ին

4. Գր-ու-ել

գրու-եց-ի

գրու-եց-իր

գրու-իր

գրու-եց-ինք

գրու-եց-իք

գրու-եց-էք, գրու-էք

գրու-եց-ին

Այսպէս խոնարհում են

1. զն ալ բայի պէս՝ մնալ, խաղալ կարգալ, որսալ կաղալ ևլն,—այն բոլոր բայերը, որոնց հիմքի վրայ անմիջապէս աւելանում է ալ վերջաւորութիւնը:

2. գրել բայի պէս՝ կանչել, գործել, շարժել, պատրաստել ևլն,—այն բոլոր բայերը որոնց հիմքի վրայ անմիջապէս աւելանում է ել (իլ):

3. մորթոտել բայի պէս՝ ջարդոտել, ստոտել—կտալ, քատել, կտրատել, կտրտել—պատուտել, ևլն,—բոլոր ըագմնապատկական բայերը, որոնք կազմուած են ուրիշ բայերից՝ ել (իլ) վերջաւորութիւնից առաջ ստանալով ոտ, ատ, տ ածանց-

ները և ցոյց են տալիս եղելութեան կրկնութիւն. ինչպէս՝ կոտորել՝ մի անգամ. կոտոր-տ-ել՝ շատ տեղից, շատ անգամ, շատ բան կոտորել:

4. Գրուել բայի պէս՝ ծեծուել, սպանուել կոտորուել, տեսնուել, կարգացուել ևն, — բոլոր կրատորական բայերը, որոնք կազմուած են ուրիշ բայերից՝ ել (իլ) վերջաւորութիւնից առաջ ստանալով ու ածանցը: և ցոյց են տալիս գլխաւորապէս այնպիսի գործողութիւն, որ բայի ենթական ուրիշ առարկայից կրում ստանում է իր վրայ: Օրինակ՝ սպանել, սպանուել. բռնել, բռնուել. տեսնել, տեսնուել. խօսել, խօսուել:

Այլ, անալ, ննալ, վերջացած բայերից կրաւորական կազմելու ժամանակ ու ածանցից առաջ մտնում են աց, եց բնի ածանցները. ինչպէս՝ կար-դալ կարդացուել՝ գրդ-անալ, գրդ-ացուել ևն:

2. Ա ԽՈՆԱՐՅՈՒՄ

Անորոշ դերբայ	Անց. կատ.	Հրամ.
1. Զով-ան-ալ	զով-աց-այ զով-աց-ար զով-աց-աւ զով-աց-անք զով-աց-աք զով-աց-ան	զով-աց-իբ զով-աց-էք
2. Մօտ-են-ալ	մօտ-եց-այ մօտ-եց-ար մօտ-եց-աւ	մօտ-եց-իբ մօտ-եց-էք

մօտ-եց-անք
մօտ-եց-ար
մօտ-եց-ան

մօտ-եց-էք

3. Ծաղկ-իլ

ծաղկ-եց-այ
ծաղկ-եց-ար
ծաղկ-եց-աւ
ծաղկ-եց-անք
ծաղկ-եց-աք
ծաղկ-եց-ան

ծաղկ-ի'բ

ծաղկ-եց-էք, ծաղկ-էք

4. Գրու-իլ

գրու-եց-այ
գրու-եց-ար
գրու-եց-աւ
գրու-եց-անք
գրու-եց-աք
գրու-եց-ան

գրու-ի'բ

գրու-եց-էք, գրու-էք

5. Հաս-ն-ել

հաս-այ
հաս-ար
հաս-աւ
հաս-անք
հաս-աք
հաս-ան

հաս-իբ

հաս-էք

6. Փախ-չ-ել

փախ-այ
փախ-ար
փախ-աւ
փախ-անք
փախ-աք
փախ-ան

փախ-ի'բ

փախ-էք

Այսպէս խոնարհուում են՝

1. Զոմանալ բայի պէս՝ գոհանալ, զարմանալ, գողանալ, շատանալ, սեանալ ևն,—այն բոլոր բայերը, որոնց հիմքի և ալ վերջաւորութեան մէջ մտնում է ան ածանցը:

2. Մօտենալ բայի պէս՝ վախենալ, ունենալ, ուզենալ և մի քանի ուրիշ բայեր, որոնց հիմքի և ալ վերջաւորութեան մէջ մտնում է նն ածանցը:

3. Ծաղկիլ բայի պէս՝ խօսիլ, դադարիլ, ծագիլ, աշխատիլ ևն,—այն բոլոր բայերը, որոնց հիմքի վրայ անմիջապէս աւելանում է իլ վերջաւորութիւնը: Այս բայերը սովորաբար գործ են ածւում եւ լծորդով և գնում են ի խոնարհման տակ ըստ զրել բայի:

4. Գրուիլ բայի պէս՝ բոլոր կրաւորական բայերը, որոնք սովորաբար գնում են ի խոնարհման տակ՝ ըստ գրուել ձևի:

5. Հասնել բայի պէս՝ գտնել, մտնել, իջնել, մեռնել (մեռնիլ) ևն,—այն բայերը, որոնց հիմքի և ել (իլ), վերջաւորութեան մէջ մտնում է ն ածանցը: Այս ն ածանցի տեղ սակաւաթիւ գրաբարից առած բայեր ան ունին՝ ուսանել, շիջանել, բեկանել, որոնցից մի քանիսն ունին և առանց ածանցի ձևեր՝ բեկել, շիջել, զիջել:

6. Փախչել (փախչիլ) բայի պէս՝ թռչել, կպչել, սառչել, դիպչել, ևն,—այն բայերը, որոնց հիմքի և ել (իլ) վարջաւորութեան մէջ մտնում է չ ածանցը:

3. ի, ե ԽՈՆԱՐՀՈՒՄ

Անորոշ դերբայ

Անց. կատ.

չըամ.

1. Զարմացնել

զարմացրի

զարմացրիլ զարմացրիւ

զարմացրեց զարմացրեց

զարմացրինք զարմացրինք

զարմացրիք զարմացրէք

զարմացրին զարմացրին

2. Մօտեցնել

մօտեցրի մօտեցրիւ

մօտեցրիլ մօտեցրիւ

մօտեցրեց մօտեցրեց

մօտեցրինք մօտեցրինք

մօտեցրիք մօտեցրէք

մօտեցրին մօտեցրին

3. Թռցնել

թռցրի թռցրիւ

թռցրիլ թռցրիւ

թռցրեց թռցրեց

թռցրինք թռցրինք

թռցրիք թռցրէք

թռցրին թռցրին

4. Մատուցանել

մատուցի (չունի)

մատուցիլ մատուցիւ

մատուցեց մատուցեց

մատուցինք մատուցինք

մատուցիք մատուցէք

մատուցին մատուցին

Այսպէս խոնարհւում են սլատմառական բայերը, որոնց հիմքի և ել վերջաւորութեան մէջ մտնում են՝ ացն, եցն, ցն, ուցան ածանցները և ցոց են տալիս այնպիսի եցն, ցն, ուցան ածանցները և ցոց են տալիս այնպիսի գործողութիւն, որի ենթական պատճառ է լինում ուրիշին մի բան կատարելու: Օրինակ՝ մտնել նշանակում է շին մի բան կատարելու: Որինակ՝ խոնարհւում են անել, պատճառ լինել որ մի բան մտնի: Խոնարհւում են 1. Զարմացնել բայի պէս՝ կարգացնել, խաղացնել, շատացնել, սեացնել ևն,—որոնք կազմւում են ալ, անալ վեր-

ջացած բայերի հիմքից՝ կարգալ, խաղալ, շատանալ, սեանալ:

2. Մ օ տ ե ց ն ե լ բայի պէս՝ խօսեցնել, ծաղկեցնել, խմեցնել, վախեցնել և ին,—որոնք կազմուում են ել(իլ), ենալ վերջացած բայերի հիմքից՝ խօսել, ծաղկել, խմել, վախենալ:

3. Թ ո ց ն ե լ բայի պէս՝ փախցնել, կպցնել, մտցնել, հասցնել, հազցնել, մեռցնել և ին,—որոնք կազմուում են չել (չիլ) և նել(նիլ) վերջացած բայերի հիմքից՝ փախչել (փախնել), կպչել (կպնել), մտնել, հասնել, հազնել, մեռնել (մեռնիլ):

4. Մ ա տ ու լ ց ա ն ե լ բայի պէս գրաբարից առած սակաւաթիւ բայեր՝ յարուցանել, ուսուցանել, հատուցանել, կառուցանել: Այս խոնարհման տակ գնում են նոյնպէս դարձնել, (վեր) կացնել, անցնել (=անց կացնել), հարցնել, լցնել, որոնք ունին Անց. կատ. դարձրի, դարձրիր, դարձրեց և ին (վեր) կացրի և ին. հարցրի, լցրի և ին: Հրամ. դարձրու, (վեր) կացրու, հարցրու, լցրու և ին:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐ ԽՈՆԱՐՀՄԱՆ

Սահմանական

Ներկայ

գնում եմ
գնում ես
գնում է
գնում ենք
գնում էք
գնում են

Ապառնի

գնալու եմ
գնալու ես
գնալու է

Անկատար անցեալ

գնում էի
գնում էիր
գնում էր
գնում էինք
գնում էիք
գնում էին

Ապառնի անցեալ

գնալու էի
գնալու էիր
գնալու էր

գնալու ենք
գնալու էք
գնալու են

Վաղակատար

գնացել եմ
գնացել ես
գնացել է
գնացել ենք
գնացել էք
գնացել են

Յարակատար

գնացած եմ
գնացած ես
գնացած է
գնացած ենք
գնացած էք
գնացած են

Անցեալ կատարեալ

գնացի
գնացիր
գնաց
գնացինք
գնացիք
գնացին

գնալու էինք
գնալու էիք
գնալու էին

Վաղակատար անցեալ

գնացել էի
գնացել էիր
գնացել էր
գնացել էինք
գնացել էիք
գնացել էին

Յարակատար անցեալ

գնացած էի
գնացած էիր
գնացած էր
գնացած էինք
գնացած էիք
գնացած էին

Հրամայական

գնա՛

գնացէ՛ք

Ըղճական

Ապառնի

գնամ

գնաս

գնայ

գնանք

գնաք

գնան

Անցեալ

գնայի

գնայիր

գնար

գնայինք

գնայիք

գնային

Ենթադրական

Ապառնի

կը գնամ

կը գնաս

կը գնայ

կը գնանք

կը գնաք

կը գնան

Անցեալ

կը գնայի

կը գնայիր

կը գնար

կը գնայինք

կը գնայիք

կը գնային

Հարկադրական

Ապառնի

պիտի գնամ

պիտի գնաս

պիտի գնայ

պիտի գնանք

պիտի գնաք

պիտի գնան

Անցեալ

պիտի գնայի

պիտի գնայիր

պիտի գնար

պիտի գնայինք

պիտի գնայիք

պիտի գնային

Դերըայներ

Անորոշ՝ գնալ

Անկատար՝ գնում, գնալիս

Ապառնի՝ գնալու.

Վաղակատար՝ գնացել.

Յարակատար՝ գնացած.

ԱՆԿԱՆՈՆ ԲԱՅԵՐ

Անկանոն բայերի անկանոնութիւնը միայն անցեալ կատարեալի, հրամայականի, անցեալ դերբայի, երբեքն և ենթակայական դերբայի մէջ է: Կրատարականը սովորաբար բնից է կազմուած:

1. **Գ ա լ**, Անգ. կատ. եկայ, եկար, եկաւ, եկանք, եկաք, եկան: Հրամ. եկ, եկէք, այլ և՛ արի, արիք: Անցեալ դերբ. եկած, եկել: Ենթ. դերբ. եկող:

2. **Լ ա լ**, Անգ. կատ. լացի, լացիր, լացաւ կամ լացեց. լացինք, լացիք, լացին: Հրամ. լաց կամ լացիր, լացէք: Անգ. դերբ. լացած, լացել: Ենթ. դերբ. լացող:

3. **Տ ա լ**, կրաւորական՝ տրուել: Անգ. կատ. տուի, տուիր, տուաւ, տուինք, տուիք, տուին կամ տուեցի, տուեցիր, տուեց, տուեցինք, տուեցիք, տուեցին: Հրամ. տու, տուէք: Անգ. դերբ. տուած, տուել: Ենթ. դերբ. տուող:

4. **Ա ս ե լ**, Անգ. կատ. ասացի, ասացիր, ասաց, ասացինք, ասացիք, ասացին: Ժողովրդական ձևով՝ ասի, ասիր, առաւ, ասինք, ասիք, ասին, այլ և կանոնաւոր՝ ասեցի, ասեցիր, ասեց, ասեցինք, ասեցիք, ասեցին: Հրամ. ասա, ասացէք, այլ և՛ ասէք:

5. **Բ ե ռ ե լ**, Անգ. կատ. բերի, բերիր, բերաւ, բերինք, բերիք, բերին: Այլ և կանոնաւոր՝ բերեցի, բերեցիր, բերեց, բերեցինք, բերեցիք, բերեցին: Հրամ. բեր, բերէք:

6. **Ն ս տ ե լ** (նստիլ), 7. **Ս կ ս ե լ**, 8. **Ծ ն ե լ**, կանոնաւոր ձևերի հետ ունին նաև Անգ. կատ. նստայ, նստար, նստաւ, նստանք, նստաք, նստան: Սկսայ, սկսար, սկսաւ, սկըսանք, սկսաք, սկսան: Ծնայ, ծնար, ծնաւ, ծնանք, ծնաք, ծնան:

9. Ուտել, Անց կատ. կերայ, կերար, կերաւ, կերանք, կերաք, կերան: Հրամ. կեր, կերէք: Անց. ղերը. կերած, կերել:

10. Բանալ, կրաւոր. բացուել: Անց. կատ. բացի, բացիր, բացաւ կամ բացեց, բացինք, բացիք, բացին: Հրամ. բաց, բացէք: Անց. ղերը. բացած, բացել: Ենթ. ղերը. բացող:

11. Կենալ, կանոնաւոր ձևերի հետ ունի Անց. կատ. կացայ, կացար, կացաւ, կացանք, կացաք, կացան (կանոնաւոր՝ կեցայ, կեցար կն): Հրամ. կաց, կացէք (կանոնաւոր՝ կեցիր, կեցէք): Անց. ղերը. կացած, կացել: Ենթ. ղերը. կացող:

12. Բառնալ, կրաւոր. բարձուել: Անց. կատ. բարձայ, բարձար, բարձաւ, բարձանք, բարձաք, բարձան: Հրամ. բարձիր, բարձէք: Անց. ղերը. բարձած, բարձել: Ենթ. ղերը. բարձող:

Այսպէս խոնարհուում է և համբառնալ բայը:

13. Դառնալ, Անց. կատ. դարձայ, դարձար, դարձաւ, դարձանք, դարձաք, դարձան: Հրամ. դարձիր, դարձէք: Անց. ղերը. դարձած, դարձել: Ենթ. ղերը. դարձող:

14. Զարնել, Անց. կատ. զարկի, զարկիր, զարկաւ, զարկինք, զարկիք, զարկին: Հրամ. զարկ, զարկէք: Անց. ղերը. զարկած, զարկել: Ենթ. ղերը. զարկող կամ զարնող: Կայ և զարկել բայը:

15. Անել, կրաւոր. անուել կամ արուել: Անց. կատ. արի, արիր, արաւ, արինք, արիք, արին կամ արեցի, արեցիր, արեց, արեցինք, արեցիք, արեցին: Հրամ. արա, արէք: Անց. ղերը. արած, արել:

16. Դնել, կրաւորական՝ դրուել Անց. կատ. դրի,

դրիր, դրաւ, դրինք, դրիք, դրին կամ դրեցի, դրեցիր, դրեց կն: Հրամ. դր, դրէք: Անց. ղերը. դրած, դրել:

17. Տանել, կրաւոր. տարուել: Անց. կատ. տարայ, տարար, տարաւ, տարանք, տարաք, տարան: Հրամ. տար, տարէք: Անց. ղերը. տարած, տարել:

18. Ելնել: 19. Տեսնել: 20. (վեր) կալնել:

21. Առնել: Հրամ. ել, տես, (վեր)կալ, առ:

22. Թողնել, Անց. կատ. թողի, թողիր, թողաւ, թողինք, թողիք, թողին կամ թողեցի, թողեցիր, թողեց: Թողեցինք, թողեցիք, թողեցին: Հրամ. թող, թողէք:

23. Լինել, (լինիլ) Անց. կատ. եղայ, եղար, եղաւ, եղանք, եղաք, եղան: Հրամ. եղիր, եղէք: Ըղծական ապառնի՝ լինիմ, լինիս, լինի, լինինք, լինիք լինին: Անկ. ղերը. լինում, լինելիս: Ապ. ղերը. լինելու: Անց. ղերը. եղած, եղել: Ենթ. ղերը. եղող:

ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԵԱԼ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ

Երկրորդական բաղադրեալ ժամանակները կազմուում են խոնարհուող լինել օժանդակ բայի ժամանակներէց և անկատար, ապառնի ու անցնալ ղերըայներից. ուստի և նայելով բաղադրիչ դերբային՝ երեք կերպ են՝ կատարողող (անկատար), կատարուած (անցեալ) և կատարելի (ապառնի):

Ներքևում դրուած են երեք կերպի խոնարհման օրինակներ, որոնց մէջ առնուած են միայն եղակի 1-ին դէմբերը: Մի քանի ժամանակներ գործնական չեն կամ հազուադէպ են պատահում, ուստի դուրս են ձգուած:

1. Կատարուող կերպ. Սահմ. ներկայ՝ գնալիս եմ լինում: Անկ. անց. գնալիս էի լինում: Վաղ. գնալիս եմ եղել կամ գնում եմ եղել: Անց. կատ. գնալիս եղայ: Ըղծ. ապառնի

և անց. գնալիս լինիմ կամ գնում լինիմ, գնալիս լինէի կամ գնում լինէի: Ենթադր. ապառնի և անց. գնալիս կը լինիմ կամ գնում կը լինիմ, գնալիս կը լինէի կամ գնում կը լինէի: Հարկ. ապ. և անց. գնալիս պիտի լինիմ, գնալիս պիտի լինէի: Անորոշ դերք. գնալիս լինել:

2. Կատարեալ կերպ. Սահմ. ներկ. գնացած եմ լինում: Անկատ. անց. գնացած էի լինում: Վաղ. գնացած եմ եղել: Անց. կատ. գնացած եղայ: Հրամ. գնացած եղիր: Ըղծ. ապառնի և անց. գնացած լինիմ, գնացած լինէի: Ենթադր. ապ. և անց. գնացած կը լինիմ, գնացած կը լինէի: Հարկ. ապ. և անց. գնացած պիտի լինիմ, գնացած պիտի լինէի: Անորոշ դերք. գնացած լինել:

3. Կատարելի կերպ. Սահմ. ներկ. գնալու եմ լինում: Անկ. անց. գնալու էի լինում: Վաղ. գնալու եմ եղել: Վաղ. անց. գնալու էի եղել: Անց. կատ. գնալու եղայ: Ըղծակ. ապ. և անց. գնալու լինիմ, գնալու լինէի: Ենթադր. ապ. և անց. գնալու կը լինիմ, գնալու կը լինէի: Հարկ. ապ. և անց. գնալու պիտի լինիմ, գնալու պիտի լինէի: Անորոշ դերք. գնալու լինել:

ԲԱՅԱՍԱԿԱՆ ՁԵԻՆԵՐԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

Ոչ, չո, մի, բառերը դրուելով բայի վրայ՝ բայի ցոյց տուած դրական եղելութիւնը բացասում են, այսինքն հերքում, մերժում են: Օրինակ՝ դրական՝ առայ. ասում, խօսում է. գնացէք. բացասական՝ չառայ. ոչ ասում է, ոչ խօսում. մի՛ գնաք:

Ոչ առանձին գործածութեամբ կարող է դրուել բոլոր ձևերի վրայ. մի՛ դրում է միայն հրամայականի վրայ, իսկ չո՛ մնացած բոլոր ձևերի վրայ:

Բացասականի համար առանձին կազմութիւն ունին միայն Հրամայական և Ենթադրական եղանակները:

Հրամայական եղանակի բացասականը, որ կոչւում է արգելական, կազմում է մի՛ մակբայով: Վերջապահութիւններն են՝ եզ. 2-րդ դէմքի համար ո, իսկ յոգն. 2-րդ դէմքի համար ք: Երկու վերջապահութիւնն ևս դրում են լծորդի վրայ: Ե լծորդը եղակիւմ սովորաբար դառնում է ի. իսկ ի լծորդը կարող է ն-ի փոխուել: Օրինակ՝

Մի՛ կարդար

մի՛ գրիր (գրեր)

մի՛ կարդաք

մի՛ գրէք

մի՛ խօսիր (խօսեր)

մի՛ խօսէք

Եղակի ո վերջապահութիւնը սովորաբար փոխւում է լ տառի, որ և խօսակցական լեզուի մէջ յաճախ դուրս է ընկնում: Ե լծորդն այս դէպքում միշտ ի լծորդի է փոխւում. ինչպէս՝ մի՛ կարդալ, մի՛ կարդալ (յ). մի՛ գրիլ, մի՛ գրի:

Ենթադրական եղանակի բացասականը կազմում է նմ օժանդակով և անորոշ գերբայով: Բացասական չ մակբայը դրում է նմ՝ բայի վրայ, որ սովորաբար գերբայից առաջ է ընկնում: Եղակի 3-րդ դէմքը միշտ չի ձևն ունի: Դերբայի ե լծորդը միշտ փոխւում է ի ձայնաւորի: Օրինակ՝

Ապառնի

Անցեալ

չեմ գնալ	չեմ գրիլ	չէի գնալ	չէի գրիլ
չես գնալ	չես գրիլ	չէիր գնալ	չէիր գրիլ
չի գնալ	չի գրիլ	չէր գնալ	չէր գրիլ
չենք գնալ	չենք գրիլ	չէինք գնալ	չէինք գրիլ
չէք գնալ	չէք գրիլ	չէիք գնալ	չէիք գրիլ
չեն գնալ	չեն գրիլ	չէին գնալ	չէին գրիլ

Անորոշ գերբայի լ վերջապահութիւնը խօսակցական էրբեմն և գրական լեզուի մէջ յաճախ դուրս է ընկնում: Օրինակ՝ չեմ՝ գրի, չեմ՝ գնալ (յ):

Բաղադրեալ ժամանակներէ մէջ չը բացասականը դրուում է եւ՞ օժանդակի վրայ, որ սովորաբար գերբայից առաջ է ընկնում. օրինակ՝ չեմ ասում, չես ասում, չէի ասում, չեմ ասել, չեմ ասելու եւն: Ասած չեմ լինում, ասած չեն լինում եւն:

Եթէ օժանդակը միայն լինիմ է, բացասականը սովորաբար դրուում է լինիմ օժանդակի վրայ. բայց կարող է և գերբայի վրայ դրուել, բացի անկատար գերբայից: Օրինակ՝ ասած չլինիմ, չասած լինիմ. գնալու չլինի, չգնալու լինի եւն:

Գալ, լալ, տալ բայերի Սահմ. անկատար ներկայի և անցեալի վերջի ս տառը կարող է դուրս ընկնել, երբ օժանդակ բայն առաջ է դրուում. օրինակ՝ տալիս եմ, գալիս եմ, լալիս եմ, բայց չեմ տալիս(ս), չեմ գալիս(ս), չեմ լալիս(ս). չէի գալիս(ս), չէր գալիս(ս) եւն:

ԲԱՅԵՐԻ ՍԵՌԸ ԵՒ ՈՒՂԻՂ ԽՆԴԻՐ

Ուղիղ խնդիր կամ կրող առարկայ ասուում է բայերի այն խնդիրը, որ իր վրայ կրում է ենթակայի գործողութիւնը, այսինքն՝

1. Ներգործւում, ազդւում է, փոփոխութիւն է կրում գործողութիւնից: Օրինակ՝ Երեխան պատռեց զիրքը:

2. Իբրեւ արդիւնք առաջ է գալիս գործողութիւնից: Օրինակ՝ Նա փոս փորեց:

Կրող առարկայի նկատմամբ բայերը բաժանւում են երկու տեսակի կամ սեռի՝ անցողական և անանցողական:

Անցողական ասուում են այն բայերը, որոնք ունին կամ կարող են ունենալ կրող առարկայ, որի վրայ անցնում է բայի գործողութիւնը, ինչպէս՝ ուտել, խմել, գրել, հանել, շարդել:

Անանցողական ասուում են այն բայերը, որոնք չեն կարող ունենալ կրող առարկայ, ինչպէս՝ մօտենալ, նստել, գալ, գրուել, ասուել: Բոլոր պատճառական կադմութեան բայերն անցողական են (մօտեցնել, զարմացնել). բոլոր կրաւորական կադմութեան բայերը անան-

ցողական են (ասուել, գրուել). մնացած բայերը կամ անցողական են և կոչւում են ներգործական բայ, կամ անանցողական և կոչւում են չեզոք բայ: Ուրեմն անցողական բայերը լինում են՝ ներգործական (տեսնել, գրել) և պատճառական (մօտեցնել, հեռացնել): Անանցողական բայերը լինում են՝ կրաւորական (գրուել, ասուել) և չեզոք (հեռանալ մօտենալ):

Կրող առարկան դրուում է՝ 1. ուղղական հոլովով, ուստի կոչւում է նաև ուղիղ խնդիր: 2. Եթէ մարդու անուն է և որոշ է՝ տրական հոլովով: Օրինակ՝ Նա մի մարդ տեսաւ: Բայց՝ Նա այն մարդուն տեսաւ:

Գրաբարում ուղիղ խնդիրը դրուում է մի առանձին հոլովով, որ կոչւում է հայցական. ուստի և այս խնդիրը կոչւում է նաև հայցական խնդիր:

Բոլոր անցողական բայերն ունին իրենց համապատասխան իմաստով անանցողական բայեր կամ կրաւորական կամ չեզոք ձևով. օրինակ՝ գրել, կարդալ, մօտեցնել, վերացնել—գրուել, կարդացուել, մօտեցուել կամ մօտենալ, վերացուել կամ վերանալ:

Անցողական բայերով ասած խօսքը յաճախ կարելի է շուռ տալ և անանցողական բայով ասել. այդ ժամանակ անցողական բայերի կրող առարկան դառնում է անանցողական բայի ենթակայ: Օրինակ՝ Նրան նամակ (կրող առարկայ) գրեցին: Նրան նամակ (ենթակայ) գրուեցաւ:

ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ:—1. Օրինակ՝ Քարերը կարգով շարեցին պատի տակ: Քարերը կարգով շարուեցին (կամ շարուեցան) պատի տակ:—Քարը տեղից շարժեցին:—Գրեզմանը—փորեցին:—Պարտէզում ծառեր տնկեցին:—Տունը քանդեցին:—Ամեն ծառ իր պլտղիցը կը ճանաչեն:

2. Օրինակ՝ Կայէնը սպանեց Աբէլին,—Աբէլը սպանուեցաւ: Պօղոսը ծեծեց Պետրոսին,—Պետրոսը...:—Դու ինձ ֆնսսեցիր,—Ես...: Նա գտաւ իւր որդուն,—...: Նրան իւր յանցանքի համար պատժեցին,—...:—Խեղճ մարդուն զուր տեղը տանջեցին,—...:

3. Օրինակ՝ Ծերունուն հացինստեցրին,—Ծերունին հացի նըստեց:—Երեխային կըթում մեծացնում են:—Դու ինձ վախեցրիր—...: Թռչուններին տեղից թռցրին—...: Նրան տուն վերադարձրին—...:

ԲԱՅԵՐԻ ՈՒՂԱԳՐՈՒԹԻՒՆ: 1. Բայերի վերջում, բացի հրամայականից, ա ձայնաւորից յետոյ, գրւում է անձայն յ, օրինակ՝ (նա) գնայ, կը գնայ, թող գնայ: Ձեմ գնալ=չեմ գնայ:

2. Հրամայական եղանակի վերջում անձայն յ չի գրւում և վերջին ձայնաւորի վրայ սովորաբար շեշտ է գրւում. օրինակ՝ (դու) կարգա, ասա,—կարգացէք, ասացէք:

3. Մի արգելականի վրայ միշտ շեշտ է գրւում, և երբ վերջի լ (ը) բաղաձայնը գուրս է ընկնում, վերջից գրւում է անձայն յ. օրինակ՝ մի կարգար, մի կարգայ:

4. Է տառով գրւում են էք վերջաւորութիւնը, նոյնպէս ըղձական (ենթադր. և հարկադր.) եղանակի մէջ, ասէք, ասացէք. տեսնէք, տեսէք,—տեսնէի, տեսնէիր, տեսնէր, տեսնէինք, տեսնէիք, տեսնէիր:

5. Ենթադրականի կը եղանակիչը սովորաբար անշատ է գրւում, կը կանգամ, կը կարգաս բաց կան և միացած գրողներ՝ կըկարգամ, կըկարգաս ևն: Ձայնաւորից առաջ գրւում է առանց ը-ի և միացած՝ կասեմ, կերևայ, կուտէ, կընկնի կողորմի, կոլորէ (արտասանւում է կօղորմի, կօլորի):

6. Չը բացասականը սովորաբար գրւում է առանց ը-ի և միացած՝ ինչպէս չասաց, չեկաւ, չխօսեց, չգրեց:

5. Կ Ա Պ

Կապ աւելում են այն բառերը, որոնք խօսքի մէջ մի գոյական (անուն, գերանուն), իբրև խնդիր, կապում են մի ուրիշ բառի, գլխաւորապէս բայի հետ: Օրինակ՝ գնացի

դէպի նա խօսքի մէջ դէպի բառը կապում է նա դերանուն իբրև խնդիր գնացի բայի հետ:

Կապերը գրւում են գոյականից առաջ կամ յետոյ. ուստի կոչւում են նախադրութիւն և յետադրութիւն: Օրինակ՝ առանց ինձ, բաց՝ ինձ համար:

Նա խաղը ու թիւնն երն են՝ ըստ, ի, առանց, բացի, դէպի, մինչև (մինչ), քան, իբրև:

Յետադրութիւններն են՝ մասին, համար, հանդերձ, ներքոյ, յանդիման, հետէ, պէս (լոյսը բացուելուն պէս):

Կապական բառեր: Կան որոշ թուով անուններ և ածականներ, որոնք խօսքի մէջ գործ են ածւում իբրև կապ: Դրանք են՝ հետ, պէս, չափ,—տեղ, կողմ, շուրջ, առաջ, ետև, դէմ, դիմաց, հանդէպ, վրայ, վերև, տակ, ներքև, դուրս, ներս, մէջ,—ժամանակ, առաջ, յետոյ,—մօտ, զատ, հակառակ, նման ևն:

6. Շ Ա Ղ Կ Ա Պ

Շաղկապ աւելում են այն բառերը, որոնք կապում են կամ խօսք խօսքի հետ, կամ իրարուց անկախ բառեր միմեանց հետ: Շաղկապները լինում են՝ ստորադասական և համադասական:

ԽՕՍԲԵՐԻ ՍՏՈՐԱԴԱՍՈՒԹԻՒՆ

Ստորադասական կոչւում են այն շաղկապները, որոնք բարդ ասացուածի մէջ գրուելով մի խօսքի սկզբում՝ այդ խօսքն իբրև լրացում, այսինքն ենթակայ կամ խնդիր, կապում են մի ուրիշ խօսքի հետ: Երկու խօսքից իբրև լրացում առնուած խօսքը կոչւում է երկրորդական խօսք. իսկ միւսը՝ գլխաւոր խօսք: Օրինակ՝ Մի մոռանար

երբեք, որ դու մարդ ես ասացուածի մէջ որ շաղկապով
դու մարդ ես երկրորդական խօսքն իբրև խնդիր կապուած
է մի մոռանար երբեք խօսքի հետ, որ գլխաւոր խօսքն է:

Ստորագասական շաղկապներն են՝ որ, թէ, եթէ,
որովհետեւ, մինչև, բան:

Այս շաղկապները յաճախ միանում են միմեանց կամ
ուրիշ բառերի հետ. ինչպէս՝ հենց որ, այնպէս որ, թէ որ,
որպէս զի, մինչդեռ ևն:

Իբրև ստորագասական շաղկապ կամ շաղկապական
բառ գործ են ածւում նաև

1. Որ յարաբերական դերանունը, որ դրւում է գլխա-
ւոր խօսքի մէջ եղած մի անուն կամ դերանուն
տեղ, որ կոչւում է յարաբերեալ:

2. Բոլոր հարցական բառերը՝ գործածուելով առանց
հարցման: Այս դէպքում հարցական բառերից յետոյ կա-
րելի է դնել որ բառը, որ կոչւում է թարմատար շաղ-
կապ: Օրինակ՝ Ով (որ) տեսաւ՝ զարմացաւ: Ինչ(որ) ցա-
նես, այն կը հնձես:

ՈՒՂԱԳՐՈՒԹԻՒՆ: — Երկրորդական խօսքերը գլխա-
ւորից բաժանւում են ստորակէտով կամ բուլթով:

1. Երբ երկրորդական խօսքն առաջադաս է, այսինքն
գլխաւոր խօսքից առաջ է դրւում, գլխաւորի և երկրոր-
դականի մէջ դրւում է ստորակէտ: Օրինակ՝ Ով որ փը-
քանայ, նա շուտ չքանայ:

2. Երբ երկրորդական խօսքը միջադաս է, այսինքն
ընկնում է գլխաւոր խօսքի մէջ, երկու կողմից ոտորա-
կէտերի մէջ, է առնւում: Օրինակ՝ Մեր գիւղերում, երբ
որ ամառը գալիս է, ոչ ոք պարապ չի մնում:

3. Երբ երկրորդական խօսքը վերջադաս է, այսինքն
գլխաւոր խօսքից յետոյ է գալիս, և սկսւում է որևէ
ստորագասական շաղկապով կամ յարաբերական բառով,

գլխաւորից բաժանւում է ստորակէտով: Օրինակ՝ Թող այդ
քեզ համար լինի խրատ, որ էլ չցանես մանր կտաւհատ:

4. Երբ շաղկապը գեղջւում է, և երկրորդական խօս-
քը գլխաւորի հետ կապւում է առանց շաղկապի, գլխա-
ւորից սովորաբար բաժանւում է բովթով: Օրինակ՝ Սաղն
ինչ իմանայ՝ (թէ) կաղն ինչ է: Մարդ կայ՝ (որ) հազար ար-
ժէ, մարդ կայ՝ (որ) մէկ չարժէ:

5. Յաճախ հարցական բառերով սկսուած երկրորդա-
կան խօսքերը գլխաւորից բաժանւում են բուլթով, մանա-
ւանդ երբ գլխաւոր խօսքի մէջ չկայ մի ցուցական,
որ ակնարկում է երկրորդական խօսքի իմաստին. ինչ-
պէս՝ Ով տեսաւ՝ զարմացաւ: Ինչ կուզես՝ արա՛: Ինչ որ ա-
սացիր՝ Աստուած կատարի: Որտեղ օրէնքն է՝ գանգատ
կանեմ: Ընտրիր՝ ուր որ կուզես: Բայց՝ ով տեսաւ, նա զար-
մացաւ: Ինչ կուզես, այն արա՛:

ԿԵՐԼՈՒԹՈՒԹԻՒՆ:—Որոշել գլխաւոր և երկրորդական խօսքերը,
և երկրորդական խօսքերի տեսակներն իբրև ենթակայ կամ խնդիր և
ստորագասական շաղկապները կամ շաղկապական բառերը: Օրինակ՝

1. Ով որ արմատնի բուսցնի, նրա պտղիցը չի ուտիլ: Մի բարդ
ասացուած՝ կազմուած երկու խօսքից:

1-ին խօսք. Ով որ արմատնի բուսցնի: Երկրորդական խօսք
ենթակայ: Շաղկ. ով որ:

2-րդ խօսք. նրա պտղիցը չի ուտիլ: Գլխաւոր խօսք:
2. Իմ կողմանէ կասես ձկնիկին, որ էլ չեմ ուզում տիկնոթին ա-
նել: Մի բարդ ասացուած կազմուած երկու խօսքից:

1-ին խօսք. Իմ կողմանէ կասես ձկնիկին: Գլխաւոր խօսք:
2-րդ խօսք. Որ էլ չեմ ուզում տիկնոթին անել: Երկրորդական
խօսք, խնդիր: Շաղկ. որ:

3. Փոքրիկ վտակը, որ խոխոջելով իջնում էր սարի գլխից, անց-
նում էր խիտ անտառի միջով: Մի բարդ ասացուած կազմուած եր-
կու խօսքից:

1-ին խօսք. Փոքրիկ վտակը անցնում էր խիտ անտառի միջով:
Գլխաւոր խօսք:

2-րդ խօսք. Որ խոխոջելով իջնում էր սարի գլխից: Երկրորդ-
ական խօսք, միջադաս: Շաղկ. որ յարաբերական, յարաբերեալ՝ վտակը:

ԲԱՌԵՐԻ ԵՒ ԽՕՍԳԵՐԻ ՀԱՄԱԴԱՍՈՒԹԻՒՆ

Համադասական ասուում են այն շաղկապները, որոնք կապում են երկու իրարուց անկախ համազօր քառեր, կամ խօսքեր: Օրինակ՝ Հայրն ու մայրը գնացին: Ես գնացի, իսկ դու եկար:

Համադասական շաղկապներն են՝ եւ, ու, էլ, եւ, այլ, քայց, սակայն, իսկ, կամ, քան, ապա, անգամ (իսկ), թէ... թէ, թէ, զոնէ, գէթ, մանաւանդ, այսինքն, արդ, ուրեմն, ուստի, հետեւաբար ևլն:

Այս շաղկապները յաճախ միանում են իրար հետ, կամ ուրիշ բառերի հետ. ինչպէս՝ Նաեւ, այլ և, ևս և, նոյնպէս և, նմանապէս և, ինչպէս և, ուրեմն և, հետեւաբար և, ուստի և, և այն, այն էլ, այլ ևս, մինչև իսկ, նոյն իսկ, մինչև անգամ, նմանաւանդ, և մանաւանդ, և կամ, կամ թէ, այսինքն թէ, թէ և, թէպէտ և, թէկուզ:

ՈՒՂԱԳՐՈՒԹԻՒՆ: — Համադասական բառերի մէջ կապուած լինին շաղկապով թէ առանց շաղկապի, դրւում է ստորակէտ: Համադասական բառերից վերջինը սովորաբար կապւում է եւ, ու շաղկապով, որից առաջ ստորակէտ չի դրւում: Օրինակ՝ Առիւծը, վագրը և արջը կատաղի գազան են:

Համադասական խօսքերի մէջ, եթէ կարճ են, դրւում է ստորակէտ. օրինակ՝ Եկայ, տեսայ, յաղթեցի,

Համադասական խօսքերի մէջ միջակէտ է դրւում.

1. Երբ բաւական երկար են, կամ միջի դադարն երկար է.

2. Երբ համադասական խօսքերն ունին երկրորդական խօսքեր, որոնք ստորակէտով են բաժանւում: Օրինակ՝ Արևը մայր մտաւ, քայց անտառում դեռ լոյս է. օդը ջինջ է և թափանցիկ. Թռչունները շատախօսութեամբ ծլվում են. խոտն ուրախ փայլում է զմրուխտի փայլով: — Յածր նստիր, որ բարձրանաս. բարձր մի նստիր, որ ցածրանաս:

Եւ, ու շաղկապներից առաջ ստորակէտ չի դրւում, եթէ երկու համադասական խօսքի ենթական նոյն է: Բայց երբ ենթական փոխւում է, կամ եւ, ու կրկնւում են բոլոր համադասական խօսքերի կամ բառերի սկզբում, եւ, ու շաղկապներից առաջ ևս դրւում է ստորակէտ: Օրինակ՝ Աշտարակներից մէկի գլխին նստած է ահագին, սև արծիւը եւ լուռ նայում է դէպի խորին անդունդը: Նա նըստած է անշարժ, եւ նրա սրտես աչքերը որոնում են ձորի խորութեան մէջ ցանկալի որսը: —

Եւ զուր տեղը ես տանջւում եմ, եւ յուզւում եմ, եւ դողում.

Եւ միմիայն թղթի վրայ անմիտ կերպով խաղիւղում. Ինձ ծաղրում են, եւ ամօթուկարմրում են իմ այտեր:

7. ՁԱՅՆԱՐԿՈՒԹԻՒՆ

Ձայնարկութիւն ասուում են այն բառերը, որոնք մի ծայնով կամ քաջազանչութեամբ ցոյց են տալիս խօսողի զգացումներն ու կամքը:

Ձայնարկութիւնները խօսքից դուրս քննարկ կարող են խօսքն ամեն կերպ ընդհատելով ընկնել խօսքի մէջ. ուստի կոչւում են նաեւ միջարկութիւն: Օրինակ՝ Ա՛խ, ի՞նչպէս կուգեմ տեսնել մեր հային ուրախ, ապահով, կըթեալ, ինքնագոհ: — Բայց, ա՛խ, միայն մենք կը խօսենք: Երբ յիշատակս այ թառամի, ա՛հ, այն ատեն ես կը մեռնիմ:

Ձայնարկութիւններ են՝ օխմյ, օխ, աւմդ, վմյ, մխ, մհ, մհ, էհ, ափսոս, եղիւկ, — տօ, ծօ, քն, դմհ, հապն, հվ, մյ, էյ, հօհօ, քը՛շ, քը՛ն, փը՛շտ ևլն:

ՈՒՂԱԳՐՈՒԹԻՒՆ: — Ձայնարկութիւնների վրայ դրւում է շեշտ կամ բացազանչական նշան: Ձայնարկութիւնները խօսքից բաժանւում են ստորակէտով:

Ա Մ Փ Ո Փ Ո Ի Մ

Բառերը հետևեալ տեսակների են բաժանուում.

Ա. Բայ ասուում են մենակ խօսք կազմող բառերը:
Բ. Լրացուում ասուում են այն բառերը, որոնք որևէ կողմից պարզում, ամբողջացնում են խօսքը:

Լրացումները նայելով իրենց իմաստին լինում են գոյական և ածական.

ա. Գոյականը ցույց է տալիս անկախ գոյութիւն ունեցող, կամ իբրև բնկախ մտածուած առարկայ և լինում է՝

1. Անուն կամ գոյական անուն, որ առարկաների կոչումն է և հաստատուն նշանակութիւն ունի.

2. Գերանուն, որ գրում է անուան տեղ և փոփոխող նշանակութիւն ունի:

բ. Ածականը ցույց է տալիս ոչ անկախ մտածուած գաղափար, որ մտածում է ուրիշ գաղափարների հետ կապուած և լինում է՝

1. Մականուն կամ ածական անուն, երբ մտածում է անուան հետ.

2. Մակրայ, երբ մտածում է բայի հետ.

3. Մականական, երբ մտածում է ածականի հետ:

Գ. Զօդ ասուում են բառեր և խօսքեր կապող բառերը, որ լինում են՝

1. Կապ, որով կապում է գոյականն իւր խնդրառուի հետ.

2. Շաղկապ, որով կապում են խօսք խօսքի հետ և համադր բառեր միմեանց հետ:

Դ. Զայնարկութիւն ասուում են խօսքից դուրս մնացող բառերը:

Բառերի տեսակներն, ուրեմն, իրենց գլխաւոր ստորաբաժանումներով հանդերձ լինում են՝ ըայ, անուն, դերանուն, մականուն, մակրայ, մականական, կապ, շաղկապ, և ծայնարկութիւն:

ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ԲԱՌԱՅՈՒՑԱԿ

Օ-ով գրուող բառեր

Ակօս.	Թօշնել.	Մօրուք.
Աղօթք.	Իրօք.	Յօդ, յօդուած.
Աղօտ.	Լօշ.	Յօժար.
Ամօթ.	Խելօք.	Յօնք.
Անօթ.	Խօսք.	Յօշոտել.
Անօթի.	Ծանօթ.	Յօրանջել.
Առաւօտ.	Ծղօտ.	Յօրինել.
Առօք փառօք.	Կարծեօք.	Նախօրօք.
Արդեօք.	Կարճառօտ.	Նաքօտ.
Արտօնութիւն.	Կարօտ.	Նօսք, անօսք.
Արտօսք.	Կրօն.	Շօշափել.
Արօտ.	Կօշիկ.	Ոռկեզօծ.
Արօք.	Համառօտ.	Պաշտօն.
Բօթ.	Հետադօտել.	Պոշ.
Գործօն.	Հզօք.	Պօղոս.
Գօտի.	Հօտ (ոչխարների).	Սօս, սօսի.
Դրօշ.	Հօտաղ.	Սօսափիւն.
Եղբօք (եղբայր).	Հօրոտ-մօրոտ.	Սօսիւն.
Եօթն.	Հօր (հայր).	Վաղօրօք.
Զբօսանք.	Զօն.	Վառօք.
Զգօն.	Ղօղանջել.	Տօթ.
Զօդ.	Ճօճ.	Տօն.
Զօր, զօրք.	Մօտ.	Տօդ.
Թնդանօթ.	Մօր (մայր).	Քօդ.
Թօթափել.	Մօր, Մեծամօր.	Օրօրել:
Թօն.		

Է-ով գրուող բառեր.

Ախտաժէտ.	Անէծք.	Ապաւէն.
Աղէտ.	Անշէջ.	Առնէտ.
Աղուէս.	Անվէպ.	Ասպարէզ.
Ամէն (լինի).	Անօրէն, (—ութիւն)	Արեակէզ.

Բզէգ.	Ծովահէն.	Լապէտ, պէտքա-
Բուէճ.	Կէս, կէսօր.	կան.
Գէթ.	Կէս.	Պնակալէդ.
Գէշ (էշ).	Կրկէս.	Ջրվէժ.
Գէշ, գէշութիւն,	Հակամէտ.	Սէգ.
գէշանալ.	Հանդէպ.	Սէգ.
Գէջ.	Հանդէս.	Սէր, (սիրել)
Գէս.	Հէգ.	Ստէպ.
Գէր, գէրութիւն,	Հրաւեր.	Վէգ.
գէրանալ.	Հրէշ.	Վէճ.
Գոմէշ.	Ձէթ.	Վէճ.
Դէգ.	Մէգ.	Վէպ.
Դէմ, գէմք.	Մէդ.	Վէտ վէտ.
Դէպ, գէպի.	Մէջ.	Վէր գալ, վէր ընկնել
Դէպք.	Մողէս.	Վէրք.
Դէս, գէս.	Յաւէտ.	Վրէժ, վրէժխնդիր.
Դէտ.	Նուէր.	Տգէտ.
Եղէգն.	Շահէն.	Տէգ.
Երէց.	Շէկ, շէկութիւն.	Տէր, տէրութիւն, տէ-
Ձէն, գէնք.	Շէն.	րունական.
Թէկուգ.	Շրէշ.	Տնօրէն, տնօրէնու-
Թէպէտ.	Պատճէն.	թիւն.
Ժապաւէն.	Պատնէշ.	Փէշ.
Լէշ.	Պատուէր.	Փոխարէն.
Խէթ.	Պարէն.	Քարտէգ.
Խէժ.	Պարտէգ.	Քէն.
Խլէգ.	Պէս.	Օրէն, օրէնք, օրէն-
Ծէս.	Պէտ, պէտք, սակա-	սդիր:

Յ-ով սկսուող բառերը

Յագենալ, անյագ.	Յաճախ.	Յանգ.
Յախճապակ.	Յամառ.	Յանդիման.
Յականէ, յանուանէ.	Յամրաքայլ.	Յանդիմանել.
Յակիւթ.	Յայնժամ.	Յանդուգն.
Յաղթել.	Յայտնի.	Յանկարծ.

Յանձն առնել,	Յաւելուած.	Յոխորտալ.
յանձնել.	Յաւէտ.	Յոյգ, յուղել.
Յանցանք.	Յաւիտեան.	Յոյժ.
Յապաղել.	Յաւերժ.	Յոյն.
Յաջող.	Յափշտակել.	Յոյս, Յուսիկ.
Յաջորդ.	Յեղաշրջել.	Յոպոպ.
Յառաջ.	Յեղափոխուել.	Յովալ.
Յառել.	Յեղյեղուկ.	Յորդ.
Յառնել, յարեալ.	Յենարան.	Յորդորել.
Յասմիկ.	Յետ.	Յորձանք.
Յատակ.	Յետին.	Յուլիս.
Յատուկ.	Յերիւրել.	Յուղարկաւորութիւն.
Յարատե.	Յիմար.	Յունիս.
Յարակից.	Յիշատակ, յիշել.	Յունուար.
Յարդել.	Յիսուն.	Յուշիկ, յուշարար.
Յարդ.	Յիրաւի.	Յստակ.
Յարդարել.	Յղանալ.	Յօդ, յօդուած.
Յարիլ.	Յղկել.	Յօժար.
Յարկ, (վերնա-	Յղփանալ.	Յօնք.
յարկ).	Յոբելեան.	Յօշոտել.
Յարձակուել	Յոգնակի.	Յօրանջել.
Յարմար.	Յոգնել.	Յօրինել:
Յարութիւն	Յոգոց (յոգւոց)	
Յաւանդութիւն.	հանել.	

Խնդրում ենք ուղղել հետևեալ աչքի ընկնող սխալները.

Երես	տող	սխալ	ուղղիչ
11	11 ն.	Բառասկզբում	Բառամիջում
25	2 վ.	ի, ո	ի, ու
26	2 »	շինել	լինել
27	11 »	որ	ու
29	9 »	ենթական	եզակի (ենթական)
32	7 »	կաւ	կաւ
34	7 »	նոյ	ոյ
47	9 ն.	հրաժարական	հրամայական
48	15 »	կոչում է	կոչում է
56	8 »	վեջաւորութիւն- ներն	վերջաւորութիւն- ներն
57	մոռացուել է	18-րդ տողը	գրուեց
74	5 ն.	կէտերի մէջ,	կէտերի մէջ
79	—	Ոսկեգօծ	Ոսկեգօծ
80	8 ն.	օրէն-սղիք	օրէնս-ղիք



Յառաջաբան I

Առաջին Հատուած: Հնչիւն, Տառ եւ Վանկ.

Լեզուի բաղադրիչ մասերը	5
Տառեր ու ուրիշ նշաններ	6
Չայնաւոր եւ բաղաձայն տառեր	7
Երկբարբառներ	11

Երկրորդ Հատուած: Բառ, Խօսք եւ Ասացում.

Բառերի իմաստը	20
Պարզ, բարդ եւ ածանցական բառեր	»
Անուն	22
Անուն թիւը	24
Բայ եւ խօսք	25
Դերանուն	26
Բայի լրացումները	27
Կողմնակի խնդիրներ	29
Կոչական բառեր	30
Ասացում	31

Երրորդ Հատուած: Բառերի տեսակները.

1. Անուն	33
Անուն հոլովումը	»
1. Ի հոլովում	34
2. Ու հոլովում	35
3. Ան հոլովում	»
4. Ուան հոլովում	36
5. Ոջ հոլովում	»
6. Օր հոլովում	37
7. Յ հոլովում	»

	Ուրիշ հոլովական ձևեր	38
	Անունների յօդով գործածութիւնը	»
2.	Դերանուն	39
	Դերանուն թիւը	41
	Դերանուն հոլովումը	42
3.	Ածական	44
	Ածականների տեսակները	45
4.	Բայ	46
	Բայի ժամանակները	47
	Բայի եղանակները	»
	Բայի խոնարհումը	48
	Գլխաւոր բաղադրեալ ժամանակներ	49
	Անորոշ դերբայ	»
	Անկատար դերբայ	50
	Ապառնի դերբայ	51
	Անցեալ դերբայ	52
	Ենթակայական դերբայ	53
	Լծորդի ձևեր	»
	Բնի ձևեր	56
	1. Ի խոնարհում	»
	2. Ա խոնարհում	58
	3. Ի, Ե խոնարհում	60
	Ընդհանուր պատկեր խոնարհման	62
	Անկանոն բայեր	65
	Երկրորդական բաղադրեալ ժամանակներ	67
	Բացասական ձևերի կազմութիւնը	68
	Բայերի սեռը և ուղիղ խնդիր	70
5.	Կապ	72
6.	Շաղկապ	73
	Խօսքերի ստորադասութիւն	»
	Բառերի և խօսքերի համադասութիւն	76
7.	Չափարկութիւն	77
	Ամփոփում	78
	Ուղղագրական բառացուցակ	79

ՀՀ Ազգային գրադարան



NL0247292

ՏՈՇՆ ԴԵՊՆԱԿԻ ԶՍԳԱՌՈՒՄԸ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

III.

- | | |
|--|---|
| 1. Հայոց ժողովրդական հաւատքը (գերմանական) | 1 |
| 2. Հայոց ժողովրդական զինուորը Մ. Խաչատուրյանի պատմութեան մէջ | 1 |
| 3. Ժողովրդական խաղեր (երգեր) | „ |
| 4. Հազար ու մի խաղ, ժողովրդ. երգերան, հովիտաւ վիւր հետ, Ա. Դիմիտրի | „ |
| 5. Նայիր Բ. յիմնաւ | „ |
| 6. Աշխարհաբարբ բերականութիւն | „ |
| (հեղինակից գումարով գնողներէ համար 50 կ.) | |

ԳԵՆԵՐԱԼ ՆԵՍԻՄ ԵՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐ

1. Այն որդեաքորի շարահիւտութիւնը (շրջադուրծի
հանգիւրծ),
2. Յրդեաքորի քերականութեան դասադիրք
3. Հայոց լեզուի ուղղագրութիւն Բ. տպ. փոփոխութիւն
ներոյ և բաւականահանրութիւն:

Эчміадзинъ, Академія. Ма